Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2264

82
P-43

2 NOV 200

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в срок, чтобы и другие могли воспользоваться ею.

1р
82-1 սպ
Ռ-43
82
Գրքեր
Հայ Սովետական Գրականություն
№ 1144
7102
S-34
1044

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ԼՈՒՄԱՅ» ԱՄՍԱԳՐԻ

ALFRED TENNYSON

* ՅԻՇԱՏԱԿԻՆ

IN MEMORIAM

Центральная Библ-ка им. Ленина
гор. Баку
ИНВЕНТАРИЗАЦИЯ 1936 г.
№ 21709

Անգլիերէնից թարգմանեց

Թարգմանեց Աբրահամ Մելիք-Հայանեանց

Արտատպեալ Ս. Քուրթաթեանցէի, Տիկ. 21.
Թիֆլիս 1905

2264

Дозволено цензурою, Тифлисъ, 30-го Мая 1905 г.

ՀԱՅԿ-ՍՍՀ Գ.
3337
40

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Տէննիսօնը (1809—1821) հանգուցեալ Վիկտորիա թագուհու պալատական երգիչն (Poet Eaurete) էր։ Տան և իններորդ հարիւրամեակը Մեծն Բրիտանիայի համար նշանաւոր էր հրաշակաւոր հեղինակներով, բանաստեղծներով ու գիտնականներով, բայց «ոչ մի ժամանակակից բանաստեղծի ստեղծագործութիւնը չէ ունեցել այն խոր և մնայուն ազդեցութիւնը ընդհանուր անգլո-սաքսօնեան ցեղի վերայ, ինչպէս Տէննիսօնինը»։

In Memoriamը Տէննիսօնի գլուխ գործոցն է։ Անգլիացիների կարծիքով դա «մեր դարի պօէման» և անգլիախօս հասարակութեան հաւատքի սիմվոլն է։ Այս «ժամանակակից սաղմոսները» մեծ ոգևորութեամբ ընդունուեցան ոչ թէ միայն ժողովրդի, այլ և մեծահամբաւ գրագէտների ու գիտնականների կողմից։ Մեծանուն Քարլայլը ի միջի այլոց գրում է՝ «Տէննիսօնի սքանչելի «In Memoriam-ը» «կարդում եմ անդադար, առանց ձանձրանալու և պիտի կարդամ այնքան, մինչև որ իւրաքանչիւր տողը սեպհականեմ, իւրացնեմ»։ Չարլս Քինկսլին մի ընդարձակ ժատենախօսութեան մէջ յայտարարում է, թէ «այս պօէման կարող ենք ամենայն իրաւամբ հաւասար դասել Շէքսպիրի սոնէտների հետ»։ Ուշադրութեան արժանի մի փաստ էլ սա է, որ ինչքան էլ այս բանաստեղծութիւնը շատերին վերացական թուի, այսուամենայնիւ շատ ազատամիտ գիտնականներ մեծ հիացումով են խօսում դորա մասին—օրինակ, Հաքսլին, Հերշէլը, Օվէն ու Թինդալը։ «Չըկայ, ասում է վերջինը, ինձ ծանօթ պօէմների մէջ մէկը, որ այսպէս զեղեցիկ, մաքուր և ուժեղ լինի»։

In Memoriam-ի մէջ Տէննիսօնը պախարակում է ամենատեսակ ձևապաշտութիւն ու կրօնամոլութիւն. նա իսկական կրօնասէր է, առանց ճգնաւորի պէս մոլեռանդ լինելու. Ջատագովում է միայն այն, ինչ էական ու իսկական է կրօնքի մէջ։ Նա իբրև ճշմարիտ բանաստեղծ՝ հաւատում է, թէ մարդկային կեանքը չի սահմանափակւում գերեզմանով. մահը նորա համար նշանակում է «դէպի առաջ»։

Նա սիրում է անհունապէս մայր բնութիւնը, փառաբանում է գիտութիւնը, դրուատում է մարդկային սէրը, նկարագրում է այդ սիրոյ ոյժն ու զօրութիւնը, ձգտում է դէպի վեր, թափանցում է բնութեան և հոգու ծածուկ խորքերը։ Նա դուրս է թափում սրտի վառվռուն զգացմունքներ, տալիս է կեանքի վերաբերեալ ամենակարևոր հարցեր, առաջ է բերում թեր ու դէմ կարծիքներ—խառն ի խուռն, իրար ետևից, այնպէս որ լուրջ և ուշադիր ընթերցողը կամայ-ակամայ պէտք է կանգ առնի ու մտածէ։

Jn Memoriam-ը համարւում է իր տեսակի մէջ անզուգական. դա մի հրաշալի ներբող է, որ բանաստեղծը ձօնել է իր սիրած ու պաշտած ընկեր-բարեկամին—մի ներբող, որի «նըմանը ոչ մի բանաստեղծի գրչից չի արտադրուել»։ Տէննիսօնի այդ բարեկամը կոչւում է Արթուր Հալլամ, նշանաւոր պատմագիր Հալլամի որդին, ուսանում էր Տէննիսօնի հետ միասին Քէմբրիջի համալսարանում, ուր և իրար հետ բարեկամացան փոխադարձ սիրոյ ամենասերտ կապերով։ Նա՝ բանաստեղծի այդ «կիսաստուածը» նշանուեցաւ Նորա քրոջ հետ, բայց հարսանիքը նշանակուած օրից կարճ ժամանակ առաջ մեռաւ օտարութեան մէջ 22 տարեկան հասակում. դիակը նաւով փոխադրուեցաւ հայրենիք ու թաղուեցաւ Օբլիդօնի եկեղեցում։

Բայց արդե՞օք բանաստեղծը չափազանցութիւնների մէջ չէ ընկել. մինչ՞ Արթուր Հալլամը իսկապէս արժանի էր Նորա շռայլած այդ գովեստներին»։—Մենք շատ ժամանակակից վկաների միջից միայն մէկին կընտրենք, աշխարհահռչակ քաղաքագէտ Գլադստօնին, որ նոյնպէս այդ շնորհալի երիտասարդի ժամերիմ դասընկերն էր, հետևաբար լաւ ծանօթ Նորան։ Մի քանի ամիս Նորա մահից առաջ հետևեալ գրաւոր վկայութիւնն է տուել Նորա մասին.—Նա (Ա. Հ.) բոլոր ուսանողների մէջ ամենաառաջադէմն է, օժտուած այնպիսի գերազանց մտաւոր կարողութիւններով, այնպիսի գեղեցիկ բնաւորութեամբ, որ ամեն մի Նորա հետ յարաբերութիւն ունեցողը չէ կարող չազդուել ու չաղնուանալ»։ Նորա քաղցրանուշ ձայնը, Նորա դէմքի ազնիւ գծագրութիւնները անդիմադրելի կերպով գրաւում էին բոլոր ընկերների սրտերը։ Տասն և չորս տարեկան հասակում թարգմանեց Դանթէի „Ugolino“-ն *լատիներէնից յունարէն տաղաչափութեան—ինքը անգլիացի։* Տասն և ութը տարեկան էր, երբ գրեց *իտալերէն սոնետներ* այնպիսի վարպետութեամբ, որ գրական աշխարհի մէջ հեղինակաւոր Անտոնի Պոնէցցին յայտարարեց, թէ անգլիացի Ա. Հալլամի իտալերէն ոտանաւորները չէ կարելի զանազանել բուն իտալացի բանաստեղծների ոտանաւորներից։

Թարգմանիչը խոստովանում է անկեղծաբար, թէ անկարելի էր լիովին պահպանել բնագրի անհամեմատ բարձր գեղեցկութիւնը հայերէն թարգմանութեան մէջ։ Անգլիական լեզուն, այն էլ Տէննիսօնինը, որ կոչւում է Decorative Poetry *ի* (պատկերաւոր բանաստեղծութեան) մեծ վարպետը—բաղկանում է գլխաւորապէս միավանկ բառերից, այնպէս որ մեծ աշխատութիւն էր պէտք ուրիշ լեզուի վերածել այս հոյակապ պօէման։ Շատ անգամ թարգմանիչը ստիպուած է եղել ընդհատել թարգմանութիւնը, այլ՞ևս չը վերսկսելու մտքով. բայց Jn Memoriam կարդալը նորա համար եղել էր մի անփոխարինելի անհրաժեշտութիւն։ Անողոք մահը նոր էր խլել թարգմանչի սիրասուն անդրանիկ որդի Պ—ին։ Ընթերցողը կարող է երևակայել, թէ այս բանաստեղծութիւնների իւրաքանչիւր տողը ի՞նչ բալասան էր մի որդեկորոյս հօր սրտի վէրքերի համար...

ԱԲՐԱՀԱՄ ՄԵԼԻՔ-ԶՀԱՆԵԱՆՑ

LORD ALFRED TENNYSON

* ՅԻՇԱՏԱԿԻՆ

(IN MEMORIAM)

Անգլիերէն բնագրից թարգմանեց

ԱԲՐԱՀԱՄ ՄԵԼԻՔ-ՋՀԱՆԵԱՆՑ

Մեծ Աստուածորդի, Սէր անմահական,
Թէկուզ չենք տեսել բընաւ քո երես,
Բայց քեզ գրկում ենք հաւատքով միայն,
Քեզ, որ մեզ համար անքննելի ես։

Դու սահմանեցիր թէ լոյս թէ ստուեր,
Մարդ ու կենդանուն դու տուիր եւ կեանք.
Մեր գանգի վերայ կան մահու հետքեր,
Դու արիր մահը, դու արիր եւ գանգ։

Դու մեզ չես ուզում թողնել հողի մէջ,
Մեզ ըստեղծեցիր—չըգիտենք ինչու.
Մենք խորհում ենք՝ թէ պիտ ապրենք անվերջ,
Դու ըստեղծել ես և արդար ես դու։

Դու մարդկային ես և Աստուածային—
Կատարեալ տիպար, գերագոյն մի մարդ,
Մեր կամքը մերն է. բայց և քո կամքին
Պէտք է խոնարհուի պարկեշտ ու հանդարտ։

Մեր ծրագիրներն հիմք չունին երբէք,
Շեղւում են շուտով բուն նպատակից,
Այլ դորանք միայն շողեր են բեկ-բեկ—
Դողդոջուն շողեր քո արեգակից։

Հաւատքը կօգնէ, երբ միտքն է անկար,
Լոկ տեսանելին կարող ենք քննել.
Դու տալիս ես մեզ հաւատքի դամբար,
Որ մեզ դուրս բերի խաւարից անել։

Թող գիտութիւնը զարգանայ անշեղ,
Բայց տուր՝ երկիւղած լինինք աւելի,
Որ միտք ու հոգի գործեն միատեղ,
Իրար հետ պահեն կապ անխզելի։

Բայց, ով Անսահման, բիրտ ենք ու տգէտ,

Անվախ անում ենք քեզ ծաղր ու ծանակ.
Ո՜հ, օգնիր, ով Տէր, որ տոկանք յաւէտ,
Թող սին աշխարհին լոյս տայ քո ճրագ։

Դու ներող եղիր, թէ ունիմ յանցանք.
Այս աշխատութիւնս ունայն ու տձև
Թէկուզ մարդկանց ոմտ գտնի գովասանք,
Բայց ի՞նչ գին ունի իմ ու քո առջև։

Ներիր, որ այսքան տխուր ու տրտում
Երգեր ձօնեցի ընկերիս մահուան,
Անշուշտ նա հիմայ քո մէջ է ապրում,
Ուստի էլ աւել սիրում եմ նորան։

Ներիր, եթէ ես՝ զո՞ւր վայնասունով,
Մերթ մեղանչել եմ ճշմարտութեան դէմ,
Թող քո երկնային իմաստութիւնով
Կրթուիմ ու այդպէս իմաստուն լինեմ։

I Ես համաձայն եմ այն [1]) պօէտի հետ,
Որ հռչակում է անուշ երգերով,
Թէ մարդ կարող է վեր ձգտել յաւէտ՝
Մեռած «ես» ի դէմ կռիւ մղելով։

Բայց ո՞վ է տեսնում ապագան հեռու,
Եւ կորստի դէմ գտնո՞ւմ մի օգուտ.
Կամ ո՞վ է ձգտում ամուր բռնելու
Արցունքից յետոյ մի վայելք անսուտ։

Թող սերը վշտին փարէ անարգել.
Թէ ո՞չ երկուքն էլ կը կորչին խպառ,
Աւելի քաղցր է սիրել ու զրկուել,
Մահուան դէմ կռուել ու մրցել յաւառ,

Քան թէ զուր վատնուած յաղթառատ ժամեր
Ծաղրի բռնեն մեզ ու յանդիմանեն,
—«Տեսէք, այս մարդը թէև սիրում էր,
Բայց սիրող սիրտը նուաղեց արդէն»։

II [2]) Գեղձ մշտադալար, որ բարձրացել ես
Իմ բարեկամիս հողակոյտն ի վեր,
Քո արմատները՝ մի նուրբ ցանցի պէս,
Պատել են [3]) Նորա գանգ ու ոսկորներ։

Դարնան ծաղկում են վարդ ու մանուշակ
Զարթնում է կեանքը և աճում նորից.
Եւ ղողանջում է բօթաբեր զանգակ,
Թէ մահը խլեց որդուն իր մօրից։

Բայց քեզ արևը բնաւ չէ խանձում
Եւ չէ տապալում քեզ ոչ մի մրրիկ.
Քո հազարամեայ կանաչ հանդերձում
Դու միշտ փաթաթուած կանգնած ես լռիկ։

---

[1]) Գէօթէն։ [2]) Ծառի անուն։ [3]) Բարեկամը։

Դու ծառ միգապատ, ահ ինչքան կուզեմ
Նայել դէպի քեզ, խորհել քո մասին.
Շարժում ես իմ մէջ անուրջներ վսեմ,
Կուզեմ ներսուզուել քո մէջ լիովին։

III Ո՞վ վիշտ անողորմ, իմ չար ուղեկից,
Դու մահագուշակ դաժան քրմուհի,
Մերթ քաղցր է քո շունչ և մերթ թունալից,
—Ի՞նչ ես յորջորջում սուտ ու անտեղի։

—«Վերը՝ աստղերից», շշնչում է նա,
«Մի ցանց է հիւսուած՝ խառն ու այլանդակ,
Մարող արևից լսւում են ահա
Գանգատ ու տրտունջ և խուլ աղաղակ.

Ողջ բնութիւնը մի անձև պատկեր,
Խաբուսիկ ցնորք ու լոկ մի պատրանք.
Քո սրտից բղխած անլուր մրմունջներ
Տալիս են միայն մի խուլ արձագանք»։

—Միթէ՞ այդ ձայնից խաբուիմ կուրօրէն,
Կամ այդ քրմուհուց սպասե՞մ բարիք.
Զարտաքսե՞մ դորան, չըքշե՞մ ես դէն
Իմ սրտի դռնից որպէս մի չարիք։

IV Քնին եմ յանձնում իմ ոյժ ու կորով,
Դառնում է կամքըս խաւարին գերի.
Անդեկ նաւակում մենակ նստելով՝
Տալիս եմ ինքզինքս տխուր խոհերի,

Եւ ասում՝ «ինչպէ՞ս այս կեանքը տանել,
Երբ իմ սրտիս մէջ չըկայ մի փափագ։
Չեմ իսկ յանդգնում այս հարցը անել,
Թէ ինչո՞ւ թոյլ է իմ սրտի երակ։

Ընդմիշտ զրկուել եմ, ահ, մի էակից,
Որ վաղուց ի վեր թանգ էր ինձ համար.
Սառուց ես կապել, արցունք, իմ ցաւից,
Դէհ, հալուիր հիմայ, ու վազիր ի վար։

Այսպէս ամպերը իմ սև վշտերիս
Գալիս—անցնում են քնիս մէջ ըստէպ.

Բայց առաւօտը կամքը զարթնելիս՝
Գոչում է՝ «քաջ կաց, կորստի հանդէպ»։

V Երբեմն կարծում եմ, թէ զուր է, որ ես
Խօսքով եմ յայտնում սրտայոյզ իմ սուգ.
Ծով-սրտի խորքը՝ մայր-բնութեան պէս,
Կիսով յայտնի է և կիսով ծածուկ։

Բայց մեր անհանդարտ սիրտ և ուղեղին
Հանգիստ են տալիս երգ ու երգեհոն.
Ներդաշնակ երգի տխուր մեղեդին
Մեղմում է ցաւը որպէս ափիոն։

Խօսքը ինձ համար ձորձի է նըման,
Թէև կոշտ-կոպիտ, բայց տաք է պահում.
Մեծ վիշտը այդտեղ մտած է դարան,
Հազիւ ծալքերից դէպ դուրս է նայում։

VI Մէկը գրում է իր մի նամակում,
Թէ «մահը մէկ է բոլորի համար,
Եւ բարեկամներ դեռ շատ են մնում».
—Բայց յարդը ե՞րբ է հացին հաւասար։

Թէ մահը մէկ է, անխուսափելի —
Դա ինձ չէ տալիս ոչ մի սփոփանք,
Այլ դա ինձ համար ցաւ է աւելի,
Որ օր չէ անցնում խլում է մի կեանք։

Ո՛վ հայր, քո որդուն քաջ ու անձնուրաց,
Դու նուիրել ես քո հայրենիքին,
Ձեռքիդ բաժակը դու դեռ չըխմած՝
Նա մի գնտակից փուում է գետին։

Ո՛վ մայր, դու Տէրից հայցում ես անվերջ,
Որ նաւորդ որդիդ չըտեսնէ աղէտ.
Բայց դեռ ներսուզուած քո աղօթքի մէջ՝
Նորա նաւակը խրում է անհետ։

Դեռ չըգիտէի ես էլ ձեզ նման,
Թէ անդարձ կորաւ իմ սիրոյ ընկեր,
Այլ միշտ միամիտ մինչ վերջին վայրկեան՝
Յօրինում էի մելանոյշ երգեր։

Ես կարծում էի, թէ նա պիտի գայ,
Այսօր կամ վաղը երգս լսելու,
Դուրս էի գալիս, որ ճամբի վերայ
Վազեմ ու ասեմ՝ «բարի եկար դու»։

Ըզգիտեմ թէ ո՞ւր մի հէգ [1]) աղաւնեակ
Նստած սանրում էր ոսկեթել իր վարս.
Ոսկէ յոյսերով, կ՚ուրօտ շարունակ՝
Դեռ սպասում էր գեղանի այդ հարս։

Դեռ վառարանը փայլում էր հանդարտ,
Իսկ իր սրտի մէջ սիրակէզ մի հուր,
Եւ մի ժապաւէն ու մի կարմիր վարդ
Առաւ ու պճնեց հերքը ոսկեհուռ.

Եւ ասաց, թէ նա այս զարդ ու խոպոպ
Տեսնելիս՝ պիտի համարէ սիրուն—
Ամօթից կարմրեց ու սրտաբրոտի
Ջեռքի հայելին վար դրաւ իսկոյն։

Բայց, աւա՜ղ, բաղդը կոյր ու չարաղաւ
Վճռել էր նէրան մի այլ տխուր վարձ—
Իր սիրականը չէր գալու բնաւ,
Վար ընկաւ ձիուց ու մեռաւ յանկարծ։

Նէ ի՞նչպէս տանէ իր այդ պատուհաս,
Ես ի՞նչով մեղմեմ իմ վիշտ ու թախիծ—
Նա պիտի մընայ ընդմիշտ անմուրազ,
Իսկ ես՝ անընկեր, զուրկ բարեկամից։

VII Մութ փողոցի մէջ մի դռան շէմքին,
Ուր բաղդ ունէի յաճախ գնալու,
Եւ ուր իմ սիրտը զարկում էր ուժգին—
Կանգնած էի ես մէկին ձեռք տալու։

Բայց, ա՜խ, իմ ձեռքը էլ բռնող չըկար,
Է՛լ ո՞չ քուն ունիմ, ոչ ժամ հանգստեան,
Եւ լուսածագին խոնջ ու դողահար
Դռնից ներս մտայ մի գողի նման։

Ա՜խ, նա այստեղ չէր, բայց որպէս մի ծով

[1]) Բարեկամի նշանածը, որ Տէննիսոնի քոյրն էր։

Եռում է կեանքը հեռու վայրերում.
Եւ խաւարամած անձրևի միջով
Փողոցի վերայ նոր օր է ծագում։

VIII Մի ուրախ սիրող վազում է մի օր
Սիրուհու տունը՝ սէր վայելելու,
Մնում է սառած ու ժտամոլոր
Նէ տունը թողել, չուել էր հեռու։

Եւ ցերեկ օրը դառնում է գիշեր,
Տուն ու անդաստան՝ թխպամած ու մութ...
Սենեակ ու սրահ, դաշտ ու հովիտներ
Շուտ ըստանում են մռայլ երևոյթ։

Այդպէս եմ եւ ես—գեղեցիկ այս վայր,
Ուր շրջում էինք, չունի հըրապոյր,
Ա՜խ, նա, որ չըկայ՝ այստեղ ծայրէծայր
Թառել է հիմայ ամպը սևաթոյր։

Նոյնպէս նման եմ մէկին, որ հանդում
Պտոյտ է գալիս, որ գտնէ ծաղիկ—
Մի ծաղիկ, որին խնամք էր տարուում,
Բայց յորդ անձրևից ծեծուել էր սաստիկ։

Ինձ թւում է թէ բաղդը ճիշտ այդպէս
Վարուեց իմ ծաղիկ-պոյէզիայի հետ—
Քո հսկող ձեռքից զուրկ մնալուց դէս՝
Քամուց շարժւում է և ծեծւում յաւէտ։

Հիմայ տնկում եմ տապանիդ վերայ
Այս իմ ծաղիկը—վաղուց քեզ՝ ծանօթ,
Որ գուցէ այդտեղ նոր կեանք ըստանայ,
Կամ եթէ մեռնի, գէթ մեռնի քո մօտ։

IX Ով նաւ սիգաճեմ, որ լողում ես արդ
Պերճ Իտալիայից լայն ծովի վերայ,
Բացիր առագաստ, և բեր ինձ հանդարտ
Այն սուրբ դիակը—ընկերինս է դա։

Այո, բեր հասցրու մինչև հայրենիք—
Նորանց, որ իզուր ողբում են յաւէտ.
Թող յաջող հողմեր և վէտ վէտ ալիք

Քեզ քշեն բերեն այդ նշխարի հետ։

Գիշերը քամին չըգոռայ ամուր,
Եւ չը պղտորէ քո գեղ ակօսներ,
Մինչև լոյս աստղը սիրոյ պէս մաքուր,
Փայլէ ցողապատ դատիկոնդ իվեր։

Աստղեր, ձեր լոյսը սփռէք ծայրէծայր,
Ննջիր, ով երկինք, այդ նաւի դիմաց.
Հանգչեցէք, հողմեր, ինչպէս իմ եղբայր
Հանգչում է հիմայ մունջ ու լռակեաց։

Է՛լ չեմ տեսնելու քեզ, ով իմ Արթուր,
Մինչև կըհասնէ իմ կեանքիս վախճան.
Քեզ պէս մի եղբօր ո՞ւր գտնեմ ես, ո՞ւր,
Սիրելի ես ինձ քնքոյշ մօր նման,

X Լսում եմ, ով նաւ, քո խուլ շառաչիւն,
Լուռ գիշերուայ մէջ հնչեց քո զանգակ.
Տեսնում եմ ղեկը վարող նաւաստուն,
Տեսնում եմ նոյնպէս քո լոյս ու ճըրագ։

Դու բերում ես տուն քո ճամբորդներին,
Եւ քաջ նաւաստուն իր խեղճ կնոջ մօտ.
Նամակներ ունիս կարօտ սրտերին,
Բայց մեզ համար ի՞նչ. մենք էլ ենք կարօտ,

Աւաղ,—մի դիակ, թող այդ լինի, բեր,
Սին երազները ամոքում են վիշտ.
Մենք պահպանում ենք հին սովորոյթներ,
Դորանք մեր քիմքին հաճելի են միշտ։

—Հողի տակ կուղենք թաղել մեր դիակ,
Որ տապ ու անձրև խոտ բուսցնեն վերան,
Կամ տաճարի մէջ սուրբ սեղանի տակ,
Ուր ճաշակում է հեգ քրիստոնեան։

Բայց ի՞նչքան ցաւ է, եթէ դա թաղուի
Խորունկ ծովի տակ անհետ ու անտես,
Եւ ծովամոլու ու խեցեմորթի
Փաթաթուին դորան ու պահեն այդպէս։

XI Հանդարտ առաւօտ, չըկայ ո՛չ մի ձայն,

Խոնջ սրտի համար յարմար տեսարան...
Դեղնած ծառերից թափւում են միայն
Համեղ պտուղներ, մրգեր զանազան։

Հանդարտ ու անշարժ փշոտ մորենին,
Հովիտ ու անտառ էլ ժաժ չեն գալիս.
Ցողապատ թուփը սարերի լանջին
Կանաչ ու կարմիր գոյներ է տալիս։

Խաղաղ լեռ ու ձոր, հանդարտ խոտ ու սէզ.
Վաղ-առաւօտեան շողը ջերմաւէտ
Ոսկեզօծում է կալի բարդ ու դէզ—
Եւ ապա խառնւում հեռուն ծովի հետ։

Հանդարտ է օդը, և կամաց-կամաց
Դեղին տերևներ թափթփում են վար,
Հանդարտ է սիրտս՝ ցաւերով զտուած—
Այդպէս հանգիստը թանգ է ինձ համար։

Հանդարտ է ծովը, միայն թէ հազիւ
Դողդոջ ալին է դէս-դէն ծածանւում.
Սառ ու հանդարտ է [1]) Նորա կուրծքն ազնիւ,
Ա՜խ, ալեաց հետ է միայն բարձրանում։

XII Ահա աղաւնին բարձրանում է վեր,
Որ տանէ երկինք ցաւագին մի լուր.
Երբ թափ է տալիս իր ուժգին թևեր,
Յիշում եմ Յովբի օրերը տըխուր։

Հոգիս էլ իբրև նոյեան աղաւնի
Իմ միսն ու մարմին այս մահկանացու,
Իմ ջիղ ու նեարդեր—մի բե՛ռ ձանձրալի—
Թողնում է ետև ու թռչում հեռու։

Այդպէս թռչում եմ դէպի ջինջ հարաւ,
Եւ հասնում մինչև ծովը կապուտակ.
Հեռուից հեռու տեսնում եմ մի նաւ,
Ծովափին կանգնած՝ լալիս շարունակ։

Ասում եմ՝ «ընկեր, դառնում ես դու տուն,
Հասել է արդեօք ցաւերիս վախճան».

---

[1]) Բարեկամի անկենդան կուրծքը։

Օդը կրկնում է այս իմ վայնասուն՝
«Հասե՞լ է վախճան, հասե՞լ է վախճան»։

Ցատկում եմ նաւը և արագ վազում
Մերթ յետ ու առաջ և մերթ ղեկի շուրջ,
Ուր սուրբ դիակը տեսնում եմ, ասում՝
«Ա՜խ, լոկ ունէի մի ժամուայ անուրջ։

XIII Երբ այրի մի մարդ քնի մէջ տխուր
Տեսնում է իր նոր կորցրած ընկերին,
Գրկել է ուզում. բայց, աւաղ, իզուր—
Սկսում է ողբալ ու լալ դառնագին։

Ե՛ս ինչպէս չլամ, երբ իմ սիրելիս
Թողել է ինձ զուրկ, մենակ ու նկուն.
Երկու ընկերներ իրար ձեռք տալիս
Միայն՝ կը տիրէ խորին լռութիւն։

Ա՜յսքան էլ մորմոք, այսքան էլ տրտունջ.
Զուր են ասում թէ «նա կորաւ անհետ».
Անգին էր սիրտը, չունէր լոկ մի շունչ,
Այլ աղնիւ հոգի, որ կապրի յաւէտ։

Եկ, ինձ սովրեցրու, դու, ով ժամանակ,
Թէ կեանքը լուրջ է և ոչ թէ երազ,
Ե՛կ, արդ ամէն ինչ տեսնում եմ խառնակ,
Ե՛կ, լալ կարող եմ յետոյ հանապազ։

Միտքս թռչում է յանկարծ այս ժամում,
Եւ նշմարում է հեռուից մի նաւ—
Որպէս թէ հարուստ բեռներ է բերում,
Բայց, ա՜խ, մի դիակ—միայն վիշտ ու ցաւ։

XIV Եթէ մէկը դար և ինձ լուր բերէր,
Թէ այսօր և եթ ափ ես հասնելու,
Ես կը վազէի այնտեղ անհամբեր՝
Քո խարխսխ զցած նաւը տեսնելու։

Եւ կը տեսնէի՝ մարդիկ շարեշար
Ըշտապաւ նաւից ծովափ են իջնում,
Եւ բարեկամներ գրկում են իրար—
Ես կը ճայի տխուր ու տրտում։

Ա՜խ թէ դորանց հետ նա իջնէր ցամաք,
Որ կիսատուած էր ինձ համար վազուց,
Եւ ձեռքս սեղմած՝ երկար ու բարակ
Հարց ու փորձ սկսէր ու անէր զրոյց։

Ես կը պատմէի իրան մի առ մի,
Թէ կարօտ սիրտս հալումաշ եղաւ,
Իսկ նա կը գտնէր շատ զարմանալի,
Որ կրել էի այդքան վիշտ ու ցաւ։

Եւ թէ չը հասնէր վերան պատուհաս,
Աւար չը գնար անողորմ մահուան,
Եւ թէ տեսնէին նորան անվնաս—
Դա չէր թուի ինձ անսովոր մի բան։

XV Մութ արևմուտքից բարձրացաւ մի հողմ,
Սաստիկ գոռում էր, ոռնում այս գիշեր,
Դեղնած տերևներ ցրուեց ամէն կողմ,
Ագռաւը վախից թռաւ դէպի վեր։

Անտառը սարսեց, ծովը յուզուեցաւ,
Հօտը դաշտի մէջ խառնուեցաւ իրար,
Բաղխեց սար ու ձոր, մեկնեց սրարշաւ,
Մինչև արևը լոյս թափեց աշխարհ։

Եւ եթէ չասէր իմ ներսը մի ձայն,
Թէ նորա նաւը լողում է մեղմիկ
Լուռ ծովի վերայ—բիւրեղի նման՝
Ես չէի տանիլ այս գոռ փոթորիկ,

Որ դղրդում է աշնան ծառ ու ճիւղ.
Բայց այս տեսնելիս՝ զարթնում է կասկած...
Վշտայոյզ սիրտս որպէս հրաբուղխ
Ժայթքում է դէպի երկինք ամպամած,

Ուր ամպը ըստէպ վեր է բարձրանում
Եւ քաշում իր հետ սիրտս վշտաբեկ
Եւ կուտակւում է մութ արևմուտքում,
Որպէս մի պատնէշ վառ ու հրաշէկ։

XVI Այս ինչ խօսքեր են՝ իմ լեզուից թռան.
—Մեղմ վհատութիւն և ցաւ սոսկալի

LENIN adына Центр. Библиотека № 1047 им. ЛЕНИНА Mərkəzi qutubxanası
3337 40
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-ՍՍՀՄ

Ե՞րբ մի կուրծքի մէջ մէկ տեղ կը մնան—
Ա՜յսքան էլ վիշտը յեղյեղուկ լինի։

Մարդը մնում է կարծես անտարբեր
Թէ փոթորկալից, թէ պարզ օրերում,
Բայց գի՞տես թէ ինչ պէս-պէս յուզմունքներ
Վխտում են նորա սրտի խորշերում։

Կամ թէ ասա՛ ինձ՝ միթէ՞ կիմանայ
Մի մեռած ծովի խորամուխ յատակ,
Թէ իր կապուտակ հայելու վերայ
Աբառյտը վերից գցել է շուաք։

Բաղդը ցնցեց ինձ, հարուածեց ուժգին—
Ինչպէս գիշերը մի ժայռ սեպաձև
Հարուած է տալիս փոքրիկ նաւակին,
Եւ խիստ ցնցելով՝ խրում է ներքև։

Աւա՜ղ, խառնում եմ ցիր ու ցան մտքով
Սուտ ու ճշմարիտ, հին ու նոր իրար.
Աւա՜ղ, էլ չունիմ ոչ մտքի կորով,
Ո՛չ գիտակցութիւն և ոչ գաղափար։

XVII Ով նաւ բաղձալի, դու մօտենում ես՝
Մի յաջող քամուց առաջ մղուելով,
Եւ իմ աղօթքը՝ մի մեղմ սիւքի պէս,
Քեզ դէպի ափ է բերում ապահով։

Հոգով տեսնում եմ՝ շարժում ես մեղմիկ,
Ներքև հանդարտ ծով, վերև ջինջ կամար.
Ա՜խ, իմ օրերը երկար են ու ձիգ,
Հշտապիր ու բեր նորա սուրբ նշխար։

Իմ օրհնութիւնը քեզ միշտ ուղեկից—
Որպէս մի պայծառ լուսոյ շառաւիղ,
Որ քեզ զերծ պահէ չար վտանգներից,
Եւ տիւ ու գիշեր ցոյց տայ քո շաւիղ։

Քամին հակառակ ու աղէտաբեր
Թող հանգիստ թողնէ քեզ, ով սուրբ նաւակ.
Եւ ես կաղօթեմ, որ պայծառ աստղեր
Փայլեն քո վերայ գիշեր ժամանակ։

Այդ սուրբ ճիւնը, որ բերում ես դու,
Գոնէ հիմայ ինձ կըտայ սփոփանք,
Նորան ես այստեղ էլ չեմ տեսնելու,
Մինչև վերջանայ որբացեալ իմ կեանք։

XVIII Դա էլ մի բան է, որ նա զէթ հանդչէ
Իր հայրենական օրհնեալ հողի տակ,
Եւ նուիրական իր փոշուց գուցէ
Ծլին ու ծաղկին վարդ ու մանուշակ։

Դա չնչին բան է, բայց եւ ցանկալի
Ցանձնել ճիւնը այստեղ տապանին,
Որ իր բոլորտիք վայրեր ընտանի
Եւ իրան ծանօթ անուններ լինին։

Հասէք, սուրբ ձեռքեր, կրէք այս գլուխ,
Որ հանգիստ ու մեղմ ննջում է կարծես,
Եկէք, ով մարդիկ, լացէք սրտաբուղխ,
Եւ տեսէք նորա թաղման սուրբ հանդէս։

Ա՜խ թէ կատարուէր իմ վերջին տենչանք—
Այս հաւատարիմ կուրծքին վար ընկած՝
Ես ներշնչէի սեպհական իմ կեանք—
Մահամերձ կեանքիս այս վերջին իմ կայծ։

Բայց պէտք է տոկամ, որ կեանքի կուռում
Քիչ-քիչ կարենամ տանել ցաւ ու վիշտ.
Խօսքը յիշում եմ. բայց, ա՜խ, չեմ լսում,
Դէմքը չեմ տեսնում. բայց յիշում եմ միշտ։

XIX Այն աղնիւ սիրտը, որ էլ չի զարկում,
Գոռ Դանուբ գետը յանձնեց Սեվերինին.
Նորան թաղեցին կանաչ եզերքում,
Ուր որ լսում է ալեաց մեղեդին։

Սերէրնը ծովի գաղը ջրի հետ
Շփում է օրը երկ-երկու անգամ—
Լռում է խլոյն կարկաչող այդ գետ,
Լռում են նոյնպէս լեռ ու ձոր փարթամ։

Գետը չի շարժւում, ննջում է կարծես,
Եւ լուռ է որպէս իմ վիշտը անբաւ.

Արցունքը եւ ինձ խեղդում է այնպէս,
Որ խօսք չեմ գտնում երգելու իմ ցաւ։

Ծովի հոսանքը դադար առնելիս՝
Երգում է գետը դարձեալ անարգել.
Եւ իմ ծով սրտից վիշտը ցրուելիս՝
Սկսում է կրկին իմ երգը հնչել։

XX Փոքրագոյն վիշտը, որ խօսք չի գտնում
Ազատ պատմելու իր ցաւ ու տրտունջ—
Ծառայի պէս է՝ մի գերդաստանում,
Ուր նորա տէրը պառկած է անշունչ։

Ծառան թափելիս արցունքներ աղի՝
Թեթևանում է ցաւը անսահման,
Ինքնին ասում է՝ «Ո՞ւր է կարելի
Պատահել մէկին իմ տիրոջ նման»։

Ես էլ գտնում եմ երգի խօսքերից
Մի մխիթարանք՝ թէկուզ վաղանցուկ.
Բայց կայ եւ ուրիշ հոգեմաշ թախիծ
Եւ սառուց կապած դառը արտասուք։

Ցրտաշունչ տան մէջ կրակի առջև
Հեգ երեխաներ նստում են տրտում.
Եւ երբ շնչում են նոքա հև ի հև
Կաղմուում են մահու ստուերներ օդում։

Զըկայ այդ տանը ազատ ասուլիս,
Տխուր է այդտեղ, կեանքը բացակայ.
Նորա աթոռը թափուր տեսնելիս՝
Ասում են՝ «Մեռաւ. ի՞նչ բարի էր նա»։

XXI Նորա տապանի թարմ ծղօտներից
Մի քաղցրանուագ սրինդ շինեցի,
Որ ես դուրս թափեմ իմ սրտի թախիծ,
Ու ձօնեմ նորան երգ ու մեղեդի։

Եւ ճամբորդները լսելով իմ երգ՝
Ասում են հպարտ ու խրոխտաբար—
«Այս մարդը կանէ մեզ թոյլ ու պղերգ,
Կը հալի մարդկանց սրտերը իսպառ»։

Ոմանք ասում են՝ «Թող տուէք դորան,
Իր վիշտը կուզէ նա ի ցոյց հանել,
Որ գովաբանեն ու ասեն իրան—
«Տեսէք, սա գիտէ ցաւ ու վիշտ տանել»։

Իսկ ուրիշները ասում են խստիւ՝
«Զուր է զբաղուել սեպհական ցաւով,
Մինչդեռ ազգերը մղում են կռիւ,
Մինչդեռ գահերը չեն իսկ ապահով։

Ի՞նչ ժանանակ է հիմայ ողբալու,
Մինչ գիտութիւնը հրաշք է գործում,
Զգտում է դէպի աշխարհներ հեռու,
Եւ զննում աստղեր կապոյտ երկնքում»։

—«Ի՞նչ էք յորջորջում, մարդիկ կարճատես,
Երգելս է գալիս և պէտք է երգեմ.
Հարցրէք սոխակից, թէ ինչո՞ւ այդպէս
Երգում է անդուլ իր երգը վսեմ։

—Մէկը ուրախ է, երգում է կայտառ,
Իր ձագուկները թռան-գնացին,
Միւսը՝ տխուր ու սրտապատառ,
Գողացին-տարան իր փոքրիկներին»։

XXII Այն ճամբան, ուր մենք՝ երկուքս միասին,
Անցանք-գնացինք, հարթ էր ու սիրուն.
Զորս ողջ տարիներ եկան-գնացին
Վարդից դէպի վարդ, ձիւնից դէպի ձիւն։

Երբ քաղում էինք ծաղիկ, վարդ ու ծիլ,
Ուրախ երգերով իրար սիրտ տալիս,
Գալիս-անցնում էր Ապրիլից Ապրիլ,
Եւ հրճւում մեր սիրտ Մայիսից Մայիս։

Հասաւ աշունը և այդ մեր ճամբան
Հինգերորդ շրջան նոր պիտի սկսէր.
Վառ էր մեր յոյսը, վարդ՝ մեր ապագան,
Բայց մեր առաջը կտրեց մի ստուեր,

Որ մեզ իրարից անխընայ զատեց,
Փռեց քո վերայ մի սև վերարկու,

Եւ ծալքերի մէջ քեզ ամուր պատեց,
Քո շրթունքները փակեց իրարու։

Քեզ այնտեղ տարաւ, ուր չէի կարող
Գալ ու քեզ տեսնել կեանքիս ընթացքում.
Ո՜հ, այդ ստուերը՝ որպէս մի չար գող,
Անյայտ տեղ նստած՝ ինձ է սպասում։

XXIII Երբեմն լուռ ու մունջ իմ վշտերի մէջ,
Երբեմն երգելու փափագով վառուած՝
Մեն ու միայնակ քայլում եմ անվերջ
Դէպի ստուերը մութ ու ամպամած։

Քայլում եմ յուշիկ այնտեղ, ուր որ կայ
Ամեն կրօնքի գաղտնի բանալին.
Նայում եմ ետև, որտեղից եկայ,
Եւ նայում նոյնպէս առջևիս ճամբին։

Եւ ասում՝ «առաջ մարգից հնչում էր
Դաշտային աստծու քաղցրալուր մրմունջ.
Ներկան գտնում են անցեալից տարբեր,
Առաջ մի տեղև չէր անշարժ ու մունջ։

Առաջ ժղում էր [1]) մէկը միւսին,
Եւ միտքը մտքին լինում էր խթան.
Եւ մի հոգու հետ միւսի հոգին
Անխօս զառնում էր սերտ ու միաբան։

Ի՜նչ լաւ էր ճամբան, ինչ սիրուն ու զով.
Եւ ժամանակի վայելքը՝ անհուն.
Շքեղ գարունը գաղտնի հմայքով
Շարժում էր ստէպ մեր սիրտն ու արիւն։

Արկիւից յայտնուած խորհուրդ ու պատգամ,
Որ երգում էին սէդ Արքադիայում,
Հնչեցնում էինք եւ մենք յարաժամ
Հայրենի երկրի ծաղկաւէտ վայրում»։

XXIV Բայց իմ երջանիկ օրերը նախկին

[1]) Ամբողջ համարի մէջ յիշում է բարեկամի իր վերայ ունեցած ազդեցութիւնը։

Միշտ անամպ էին և միշտ անմոռան—
Սևաթոյր ամպը վաղ-արշալուսին
Չէր գալիս-անցնում որպէս ուրուական։

Թէ ամեն ինչ լաւ ու բարի լինէր,
Այստեղ կրդառնար կատարեալ դրախտ.
Ադամի այգուց զրկուելէն իվեր՝
Մարդը անհաշտ է և կեանքը դժբաղդ։

Արդեօք նոր վիշտը ապիթ է տալիս՝
Բարձր դասելու անցեալի բերկրանք.
Արդեօք գտնում է վշտաբեկ հոգիս՝
Ուրախ անցեալից, անհուն սփոփանք։

Արդեօք անցեալը հեռուից հեռու
Միշտ երևում է մաքուր ու փայլուն—
Ինչպէս մեր աչքին աստղը լուսատու
Հեռուից թւում է անբիծ ու սիրուն։

XXV Մեր կեանքի ճամբան հարթ էր ու շիտակ,
Ուր գնում էինք միատեղ առաջ.
Թէպէտ՝ ինչպէս արդ, եւ այն ժամանակ
Լուռ կրում էինք առօրեայ մեր խաչ։

Ես տանում էի բեռըս անարդել
Եւ ուրախ որպէս օդաչու թռչնիկ.
Ես սիրում էի իմ խաչը կրել,
Սէրը ինձ համար որպէս զօրավիգ։

Բեռըս չափազանց ծանրը լինելիս՝
Սէրը պատրաստ էր իսկոյն օգնելու.
Սիրոյ ընկերս կանգնած էր կողքիս,
Էլ ոչ մի կարիք չըկար յոգնելու։

XXVI Տխուր է հիմայ ճամբաս փշալից.
Բայց մարդիկ ինչքան կուզեն թող խօսան,
Ես ցոյց եմ տալու, թէ ժամանակից
Զըպիտի սէրը յաղթուի յաւիտեան։

Եթէ այն աչքը, որ չարն ու բարին
Կշռում է զգոյշ ու շրջահայեաց,

Եւ տեսնում նոյնպէս անտառի միջին
Փտած ծառերը-կանաչով պատած,

Եթէ այն աչքը տեսնում է տներ,
Թէև նորաշէն, բայց արդէն խախուտ—
Բայց չէ նկատում ոչ անկեղծ մի սէր,
Եւ ոչ էլ մի կեանք վեհ ու հանրօգուտ՝

Այն ժամ կուզէի ես վաղ-առաւօտ,
Արփին իր լոյսը չընթափած աշխարհ՝
Ըշտապել դէպի ստուերը աղօտ՝
Այնտեղ ամօթից թաքնուելու համար։

XXVII Ես չեմ նախանձում այն գերի մարդուն,
Որ զուրկ է արդար ցասումից խպաս,
Ես չեմ նախանձում, երբ մի հէգ թռչուն
Իր փակ վանդակից չէ թռչում անտառ։

Ես չեմ նախանձում այն բիրտ գազանին,
Որ զուր վատնում է անգին ժամանակ,
Զունի զգացում և խիղճ բնաւին,
Այլ գիշատելու մի անզուսպ փափագ։

Ոչ էլ՝ այն մարդուն, որ, գոհ իրանից —
Զունի ճշմարիտ ու վեհ ձգտումներ,
Այլ բաց թողնելով ճամբան փշալից՝
Վարում է մի կեանք ծոյլ ու անտարբեր։

—Բայց ինձ թոյլ տուէք ասել յայտնապէս,
Թէ շատ աւելի լաւ է ու վայել՝
Սիրել մի անգամ ու լալ ինչպէս ես,
Քան թէ բնաւին սիրած չըլինել։

XXVIII Մօտ է սուրբ օրը, [1]) Քրիստոսի ծնունդ
Լուսինը ծածկուած, գիշերը անդորր,
Միայն հնչում է՝ հեռուն թունդ իթունդ,
Տօնի զանգակը դէպի սար ու ձոր։

Զորս ձայներ ահա չորս զատ գիւղերից
Ճեղքում են օդը, սուլում ու անցնում.

[1]) Առաջին ծննդեան տօնը բարեկամի մահից յետոյ։

Բայց, մեխ, չեն հնչում այնպէս բերկրալից
Եւ այնպէս մաքուր որպէս անցեալում։

Եւ ամեն մի ձայն քամուց թև առած՝
Թռչում է վերև սլաքի նման՝
—«Կեանք ու հաճութիւն, սէր համատարած
Եւ խաղաղութիւն հանուր մարդկութեան։»

Քնից զարթնեցի ես լալահառաչ,
Ա՛խ ինչ կուզէի բնաւ չըզարթնել...
Այս զանգի ձայնը լսելէս առաջ՝
Ո՛հ թէ կտրատէր այս իմ կեանքի թել։

Բայց ինձ գրաւեց այդ մեղմ զօղանջիւն,
Առաջ դորանից հրճւում էր հոգիս,
Իսկ արդ, սուրբ գիշեր, կոչնակիդ հնչիւն
Բերկրանքի տեղակ վիշտ է ինձ տալիս։

XXIX Միայն կըգտնենք սիրտ մաշող թախիծ,
Որ կողմ էլ դարձնենք այսօր մեր երես—
Մի՞թէ կարող է մեկը մեզանից
Այս տան մէջ տօնել ծննդեան հանդէս։

Այս տօնին չըկայ թանկագին այն [1]) հիւր,
Որ երգ էր ասում մեզ հետ բարձրաձոյն—
Նա էր մեր միակ ցնծութեան աղբիւր,
Թէկուզ տօնը կայ, բայց, ա՜ւաղ, նա—ոչ։

Դուք զարդարում էք պատշաճ ու վայել
Սուրբ ոստիկներով Աստուծոյ տաճար—
Այդպէս ուզում էք Տիրոջ ծառայել,
Պճնեցէք նոյնպէս մեր դոան կամար։

Այս տան ծառայող ալեզարդ կանանց
Հաճոյք է տալիս տօնը այս օրուան.
Եկէք, պճնեցէք, մի՞ զրկէք նէրանց,
Նէրանք էլ շուտով կիջնեն գերեզման։

XXX Դողդոջուն ձեռքով պատրաստում էինք
Դալար դարնիներ սեղանի համար.

[1]) Մեռած բարեկամը։

Բայց ամպը գոռաց՝ ու մթնեց երկինք—
Ծննդեան տօնը խանգարուեց իսպառ։

Հին դահլիճներում՝ շարուած թև ի թև—
Խաղ էինք անում. բայց լոկ—առերես.
Ահ՛ւաղ, թառել էր մեր գլխի վերև
Մռայլ ստուերը մի սև ամպի պէս։

Մենք դադար առինք և մի փոթորիկ
Ցանկարծ դղրդեց ցրտաշունչ գետին,
Եւ սարսափահար, անշարժ ու լռիկ
Նստած՝ նայեցինք իրար երեսին։

Նորէն սիրտ առած՝ ազատ, անարգել
Մէկ տեղ սկսեցինք երգել քաղցրալուր—
Այդ երգը Նա՛ էր գրել ու երգել,
Բայց Նա, որ չէկար, հնչում էր տխուր։

Երգը դադարեց, նորից շունչ առանք,
Մեր սրտին տիրեց մի մեղմ զգացմունք.
Ասացինք՝ «հանգիստ ննջում են [1] Նորանք»,
Եւ լուռ թափեցինք աղէխարշ արցունք։

Կրկին երգեցինք իրար ասելով՝
«Էլ Նորանց համար այնտեղ ահ չկայ.
Նորանք վերեից անփոփոխ սիրով
Նայում են անշուշտ հիմայ մեզ վերայ։

Երկրի կեղտերից զտուած ու մաքուր՝
Հոգին թռչում է ազատ դէպի վեր—
Այդ անշէջ կայծը, սրբազան այդ հուր
Բոցեր է սփռում եթերից եթեր»։

Բացուիր, ով սուրբ օր, առաւօտ սիրուն,
Զարթիր, արևելք, փարատիր մեր ցաւ.
Թող ծագէ, ով հայր, այն լոյսը փայլուն,
Որ ծագեց, երբ մեր Յոյսը ծնուեցաւ։

XXXI Երբ Ղազարոսը թողեց իր տապան,
Դարձաւ իր տունը—Մարիամին կարօտ,

[1]) Երթուր Հալլամը ու իր նշանածը—երկուքն էլ մեռած։

«Ո՞ւղեցիր լսել», հարց արին Նորան,
Քո քրոջ լացը գերեզմանի մօտ»։

—«Ո՞ւր էիր եղբայր, այս քառեակ օրեր»—
Ո՛չ մի պատասխան չէկար այդ հարցին.
Թէ մահը ի՞նչ է, եթէ Նա պատմէր,
Մարդիկ աւելի Տիրոջ կօրհնէին։

Եկան դրացիք՝ խեղճ ու վհատուն,
Ցնծագին ձայներ լսուեցան այնտեղ.
Կարծես գերագոյն մի ուրախութիւն
Պատեց Զիթենու գագաթը շքեղ։

«Տեսէք, Ղազարոս յարութիւն առաւ»—
Գրուածքից այդ է միայն մեզ յայտնի.
Սուրբ հեղինակը հիմք ունէր հարկաւ,
Որ գրեց այդչափ և ոչ աւելի։

XXXII Մարիամ աղօթեց լուռ ու ոգելից.
Սա էր աղօթքի միակ առարկան,
Թէ իր եղբայրը այնտեղ էր Նորից.
Այնտեղ էր եւ Նա, որ յարոյց Նորան։

Սէրը սրտի մէջ բորբոքեց ուժգին,
Երբ իր հայեացքը լուրջ ու աներկբայ
Յառեց իր եղբօր սիրավառ դէմքին.
Ապա կանգ առաւ Եւ Կեանքի վերայ։

Այդ լի բերկրութիւն և անշէջ այդ սէր.
Ցրեցին իսպառ ահ ու տարակոյս,
Թրջեց արցունքով Քրիստոսի ոտներ,
Եւ իւղով օծեց գոհ ու լիայոյս։

Երբ ջերմ աղօթքով տոգորուի մի կեանք,
Եւ սէրը ահի գերագոյն սիրով—
Ի՞նչ մեծ բարիք է և ի՞նչ մեծ օրհնանք,
Այդպէս մաքուր կեանք ով կունենայ, ով։

XXXIII Դու, որ հոգեյոյզ փոթորկից յետոյ,
Քեզ մի ջինջ օդի հասած կըկարծես,
Հաւատքով վեհանձ ու բարեբարոյ,
Թէկուզ մերժում ես ամեն ձև՝ ու ծէս—

Թող՝ տուր աղօթէ քոյրըդ անվրդով,
Թող նէ յուսավառ ձգտէ դէպի վեր.
Եւ մի պղտորիլ մութ ակնարկներով
Նէրա պարզ կեանքը և ուրախ օրեր։

Ձեր հաւատքն ունի նման վեհութիւն,
Նէ ունի եւ ծէս եւ կեանք օգտաւէտ.
Թող օրհնեալ լինի այն մարմին, արիւն,
Որ նէ կապում է մի խորհրդի հետ։

Դու հետևող ես բանականութեան,
Աղճի օրէնքին՝ անկեղծ հպատակ,
Բայց նայիր, ընկնես մեղսալից ճամբան,
Թէ չունիս այդպէս տիպ ու օրինակ։

XXXIV. Այս դան են տալիս իմ մռայլ օրեր,
Թէ կեանքը պէտք է անվախճան լինի,
Թէ ոչ երկիրը կըլինէր աւեր,
Եւ ինչ այնտեղ կայ—մոխիր ու փոշի։

Կանաչ դաշտերը, կամար լուսաշող
Մեզ կըթըւային սին ու այլանդակ—
Որպէս մի քերթուածք, որ մի խակ քերթող
Գրել է անխիղճ ու աննըպատակ։

Ի՞նչ կլինէ՞ր Աստուած ինձպէսին համար,
Եւ միթէ՞ կարժէր ինչ որ բան ընտրել,
Ճիգ թափել տոկուն, համբերել յօժար,
Եւ այս սին կեանքից մի օգուտ փընտրել։

Է՛լ լաւ կը լինէր թռչունների պէս,
Որ զոհ են գնում թովիչ վիշապին,
Ընկնել գլխիվայր և թաղուել անտես
Խոլ խաւարի սէջ—անդունդը մթին։

XXXV Թէ վստահելի մի ձայն շշնչէր
Նեղ գերեզմանից և ասէր այսպէս՝
«Փտում է մարմին, մաշւում են այտեր,
Մեռնում է մարդը և կորչում անտես՝»

«Կասէի, ով սէր, քեզ համար պիտի
Ես լինեմ զինուոր՝—միշտ կռուի պատրաստ,

Որ դու միշտ մնաս վառ ու կենդանի»։
Եւ պիտի դառնամ ու լսեմ զգաստ

Ծով ու գետերի տխուր մեղեդին,
Որոնք մերթ դանդաղ, մերթ արագաբար
Փշրում են հին լեռն ու շինում կրկին
Դորա փոշիով մի նորոգ աշխարհ։

Եւ սէրը կասէր հառաչ քաշելով՝
«Այդ անխիղճ ծովի կոծ ու հեծեծանք
Մեռցնում են խպառ իմ խանդ ու կորով,
Մահը տեսնելիս՝ մաշւում է իմ կեանք»։

—Անօգուտ խօսքեր և զո՞ւր վայնասուն։
Թէ հաւարէինք մահը իբրև մահ,
Սէրը չունենար պիտի գոյութիւն,
Եւ ոչ էլ գործէր ազատ ու վստահ։

Կամ գոյութիւնը կը լինէր ունայն.
Այծամարդի պէս բիրտ ու գարշաղէմ,
Որ միշտ լցնում է իր գէր որովայն,
Եւ մէջքը դարձնում արեգակի դէմ։

XXXVI Վեհ ճշմարտութեան սաղմը թէև կայ
Մարդկային սրտում իբրև մի գաղտնիք,
Բայց օրհնենք նորան, որ դորա վերայ
Դրեց իր անջիջ զրոյմ ու կնիք։

Երբ ճշմարտութիւնն մութ էր ու օտար,
Իմաստութիւնը եկաւ մեզ այցի—
Ճշմարտութիւնը տգէտի համար
Առակի ձևով եղաւ մատչելի։

Խօսքը շունչ առաւ և մարդկանց ձեռքով
Ստեղծեց հաւատք և ազնիւ գործքեր.
Ո՛չ մի պօէտի հանճար ու կորով
Չեն այդպէս ազդու, վեհ ու շահաբեր։

Կարդալ այս խօսքը կարող է դիւրաւ
Ե՛ւ փոս փորողը եւ հէգ գիւղացին,
Ե՛ւ որմնադիրը՝ ձեռքին քար ու կաւ
Ե՛ւ ղեկ վարողը փոթորկի ժամին։

XXXVII [1]) Ուրանիան սկսեց բարկացած խօսել—
«Ի՞նչ ես բարբանջում, փոքրիկ մեծախօս,
Այս հաւատքն ունի քեզնից էլ աւել
Մաքուր քահանայ և ընտիր հերոս։

Վար իջիր դէպի ծանօթ առուներ,
Եւ ման եկ դու քո [2], Պարնասի վերայ,
Թող քո սարդենին՝ սարալանջն իվեր,
Բնարեր օրօր քեզ համար կարդայ»։

Եւ [3]) Մելպոմինէն, իմ աստուածուհին
Պատասխան տուաւ հէգ ու գլխիկոր—
«Արժան չէ խօսել ինձ նման մէկին
Քո խորհուրդներից՝ մեծ ու զօրաւոր։

Ես մի երգիչ եմ՝ հողին հաւասար,
Խիստ աննշան է իմ ձիրք ու արուեստ.
Երգում եմ ցաւոտ սրտերի համար,
Եւ մարդկանց սիրոյն տալիս եմ գովեստ։

Միտ էի բերում Նորան, որ մեռաւ,
Եւ յիշում Նորա ջերմ խօսակցութիւն,
Որ տալիս էր ինձ բերկրութիւն անբաւ—
Որպէս սուրբ գինին մահամերձ մարդուն։

Իմ այս նեղ ճամբին կաթօտ էր հոգիս
Սուրբը գրոց միջի մխիթարութեան.
Ծոյլ ծառայ էի իմ վարդապետիս,
Երգըս պղծում էր Նորա սրբարան»։

XXXVIII Քայլում եմ յոգնած ու թոյլ ոտքերով,
Անծայր երկինքը մութ է ու մռայլ.
Ոչինչ չի վառում իմ խանդ ու կորով։
Հեռուն չեմ տեսնում ամպեր լուսափայլ։

Ո՜հ ինչ տխուր է գարունը հիմայ,
Գարնան երգերը չեն տալիս հրճուանք.
Բայց այս իմ սիրած երգերի մէջ կայ
Դոնէ ինձ համար փոքրիկ սփոփանք։

[1]) Աստղերի Մուսան։ [2]) Յունաստանում մի լեռ, որ համարւում էր մուսաների կացարանը։ [3]) Ողբերգութեան Մուսան։

Թէ ննջեցեալց հոգիքը ունին
Այս երկրի համար գէթ փոքրիկ մի սէր.
Անշուշտ անախորժ չեն քո ականջին
Այս իմ քո անուան ձօնածըս երգեր։

XXXIX Ո՜հ թէ կարէինք վեր նայել հիմայ
Ա՛յն հոգիներին, որ թռան երկինք,
Ինչպէս նայում ենք հարսնացուի վերայ,
Որ ծաղիկ առած՝ պճնում է ինքզինք.

Եւ իր ծնողքի օրհնանքը առած՝
Թողնում է ետև հայրական իր տուն,
Թէկուզ աչերը թաց ու թխպամած,
Բայց եւ սկսում է իր կեանքի գարուն։

Հայրը ուրախ է. բայց լոկ—առերես.
Իսկ մօր այտերից արցունքն անբաժան...
Եւ տալով նորանց համբոյր սիրակէզ
Թեակոխում է նէ մի նոր շրջան,

Ուր իր մանկիկին պիտի տայ անունդ,
Եւ կրթէ նորան ու գործէ յաւէտ—
Նէրա պաշտօնն է, որ մի նոր սերունդ
Կապէ պապագայ սերունդների հետ։

Քեզ էլ անկասկած մի կեանք արուեցաւ,
Որ դարձնես անմահ ու միշտ օգտակար,
Որ քո պաշտօնից չըյոգնես բնաւ,
Կատարես գործքեր—երկնքին յարմար։

Բայց, ա՜խ, տարբեր է մեր այն բաժանում...
—Երբ ծնողները նորահարս դստրից
Բարի և ուրախ լուր են ստանում,
Ցրւում են իսկոյն հոգսեր ու թախիծ։

Երբ ջահել մայրը՝ ինքնագոհ ու սէգ,
Իր ծծկերի հետ գնում է հէրանց,
Նէրա ծնողը—առաջ վշտաբեկ,
Բայց հիմայ ինչպէս հրճւում են սրտանց։

Բայց, ա՜խ, մենք իրար էլ չենք տեսնելու,
Մինչև ես կիջնեմ խոնաւ գերեզման.

Որ անյայտ երկրում բնակւում ես դու,
Իսկ իմ բաժինը—այս փշոտ ճամբան։

XL Մահիցդ առաջ քո հոգին անբիծ
Զգտում էր միշտ վեր ազատ ու կայտառ—
Որպէս նուրբ նիւթը թանձր զանգուածից,
Որպէս սեղանի հուրը մշտավառ։

Բայց, ա՜խ, դու հիմայ անքննելի ես,
Է՛լ չեմ ժամանակից քո վեհ գործքերին,
Հեռու վայրերում՝ անյայտ ու անտես,
Միշտ սաւառնում է հիմայ քո հոգին։

Ի՜նչ, ցնորք է սա.—բայց չէր կարելի,
Որ ես զօրաւոր թեւեր ստացած՝
Կեանք ու արևից վեր սլանայի
Դէպի քեզ, ով իմ ընկեր անմոռաց։

Մահը չէ տալիս ինձ այնքան մեծ վիշտ,
Եւ չէ պատճառում սարսափ իմ հոգուն,
Ո՛չ էլ անդունդը, ուր լսւում են միշտ
Զարագործ մարդկանց ճիչ ու վայնասուն,

Այլ երբ շատ անգամ կարմիր վերջալոյս
Պատում է վայրը՝ ճահճոտ ու աւեր,
Տիրում է սրտիս այս սև տարակոյս,
Թէ, ա՜խ, չեմ կարող լինել քեզ ընկեր։

Թէկուզ վեր ձգտեմ ու գնեմ անվերջ
Քեզ շրջապատող հրաշք ու զարմանք,
Դարձեալ ինձանից անհունութեան մէջ
Առաջ ես ամբողջ մարդկային մի կեանք։

XLI Բայց թէ առաջ է ինձնից իմ ընկեր,
Խիստ զգալի է սին սրտիս համար.
Երբ բնակութեան մեր տեղը մէկ էր,
Ինձ կարծում էի նորան հաւասար։

Ես հիմայ այստեղ, իսկ նա երկնքում,
Բայց նա ինձ համար դարձեալ սիրելի.
Իր հմուտ հոգին պիտի անդադրում
Առաջնորդէ ինձ ազնիւ գործքերի։

Մէկը ունի սէր գիտութեամբ հանդերձ,
Իսկ մի ուրիշը՝ առանց գիտութեան,
Բայց երբ իրար հետ ապրեն սրտամերձ,
Ճշմարտութեան մէջ միշտ առաջ կերթան։

XLII Թէ նինջ ու մահը ճիշտ մէկ լինէին,
Եւ ինչպէս ծաղիկն իր կոկոնի մէջ
Փակուած ննջում է իրիկուան պահին—
Վերամբարձ հոգին քուն մտնէր անվերջ,

Թռչող ժամերից ազատ, անտարբեր,
Եւ մարմնից ջոկ—կը վարէր իր կեանք,
Կը պահէր իր մէջ անցեալի հետքեր—
Ինչպէս ծաղիկը իր գոյն ու երանգ.

Եւ մարդուս համար չէր կորչիլ ոչինչ,
Չի հոգիների խաղաղ պարտիզում
Շատ ծաղկանց վերայ տպւում է անջինջ
Արար-աշխարհը և այդպէս մնում։

Եւ նորա սէրը կը մնայ յստակ,
Ինչպէս յստակ էր այս երկրի վերայ.
Եւ հոգիների գարնան ժամանակ՝
Նորա ջինջ հոգին նոյնպէս կարթնանայ։

XLIII Ի՞նչպէս է այնտեղ մեռելի վիճակ...
Մինչ մարդը այստեղ ձգտում է միշտ վեր,
Ա՜խ, միշտ յիշելու նա չէ ընդունակ,
Նա մոռանում է իր անցեալ օրեր։

Զքացան օրեր, նոյնպէս՝ ձայն ու գոյն.
Բայց բազմամթեր մեր մտքից գուցէ
Մերթ ցայտէ մի կայծ դէպի մեզ թագուն,
Եւ մենք չը գիտենք՝ դա որտեղից է։

Այս տարիներում միաձև, երկայն,
(Թէ ժամը խմեց *) Լեթէյի ակից)
Գուցէ քեզ հանի մեղմ հնչիւն մի ձայն
Այս երկրից, ով իմ ընկեր սրտակից,

*) Ստորերկրեայ աշխարհի աղբիւրներից մէկն է, որի ջրից խմողը՝ ըստ հին դիցաբանութեան, կը մոռանար անցեալը։

Թէ լսես ձայնը այդ մելամաղձոտ,
Է՛լ մի վարանիլ, նայիր դէպի վար—
Դա հրեշտակս է, եկել է քեզ մօտ,
Ինձանից լաւը է բերել քեզ համար։

XLIV Աշխարհ նոր մտած ծծկեր երեխան
Ամուր սեղմւում է իր մօրը կուրծքին.
Նա դեռ չի հասել պարզ գիտակցութեան,
Գաղափար չունի իր «ես» ի մասին։

Ինչքան աճում է՝ այնքան աւելի
Ըզգում է իրան իբրև մի անհատ,
Եւ հետզհետէ տեսնում է յայտնի՝
Ա՛յլ էր իր «ես»-ը, այլ իր շրջապատ։

Իր մէջ զարթնում է եւ միտք եւ կորով,
Առաջ է գալիս եւ յիշողութիւն.
Եւ իր մարմնի մէջ իրան փակելով՝
Դարձնում է «ես»-ը որոշ և ուրոյն։

Հէնց դորանով է մարմինն օգտաւէտ,
Թէ ո՛չ էլ ի՞նչի կը ծառայէր դա.
Երբ մարդը նորից ծնուի մահից յետ,
Իր ինչ լինելը պիտի հասկանայ։

XLV Մերթ սուր փուշեր կան և մերթ ծաղիկներ
Այն ճամբին, ուր մենք կանցնինք հև ի հև.
Սրընթաց ժամը զցում է ստուեր
Այդ ճամբին, որ զուր չը նայենք ետև։

Բայց ո՛չ մի ստուեր չը պիտի լինի
Գերեզմանից դէն—երկնքից իվար,
Այլ պիտի տեսնենք որոշ ու յայտնի
Մեր վաղ-անցեալի հին *) դաշտանկար։

Աչքներիս առջև պիտի փողփողեն
Մեր վարած կեանքը—սիրալիր ու հաշտ.
Առատ օրերի հունձքը ոսկեղէն,
Եւ մեր հնգամեայ ասպարէզ ու դաշտ։

Սէր անմահական, այս երկրի վերայ

*) Landscape, Landschaft.

Նեղ էր քո տեղը և կարճ՝ քո ճամբան.
Բայց նայիր, ով սէր, մի ատաղ աչա
Ի՞նչ փայլ է տալիս սահմանից սահման։

XLVI Թէ ամեն մի մարդ, որ ունի իր «ես»,
Պէտք է պտոյտ տայ ու մաշուի անվերջ,
Եւ ապա սուզուի՝ անհետ ու անտես,
Հոգոյ աշխարհի անտակ ծովի մէջ—

Դա մի կարծիք է—դառնաշունչ ու սին։
—Մեր անմահ հոգին՝ առանձին ու զատ,
Պիտի ստանայ մի անեղծ մարմին,
Եւ այդպէս դառնայ ուրոյն մի անհատ։

Ես այնտեղ նորան պիտի ճանաչեմ,
Եւ հետը տօնեմ մի ուրախ հանդէս.
Կա՞յ այս անուրջից աւելի վսեմ,
Որ դէպի սէրը մղէ մեզ այդպէս։

Նա, որ կը կռուէ իր մահից առաջ
Արգելքների դէմ միշտ արիաբար,
Մեռնելիս՝ կասէ աներկիւղ ու քաջ,
«Մնացէք բարեաւ, կերթամ լոյս աշխարհ»։

XLVII Թէ վշտից ծնուած այս իմ երգերով
Ծանր կասկածներ ջրել ջանայի,
Լրջամիտ մարդիկ երգը լսելով՝
Ինձ կը դարձնէին ծաղրի արժանի։

Կնճռոտ հարցերից վաղուց փախս տուած՝
Է՛լ չեմ ծառայում այդ նպատակին.
Իսկ թէ ծագում է մի փոքրիկ կասկած,
Դա էլ դարձնում եմ սիրոյ մունջ գերին։

Վիշտը մղում է մերթ բանակռիւ,
Բայց դուրս չէ գալիս չափ ու սահմանից,
Նոյն իսկ ամօթ է և ո՛չ թէ պատիւ՝
Փքքուն երգերով ցոյց տալ իմ թախիծ։

Ո՛չ մի թափ ու ոյժ չեմ տալիս երգիս,
Այլ ճռուողել եմ միայն փափագում—
Որպէս մի ծիծառ, որ վեր թռչելիս՝

Արցունքի առուից խմում է մի կում։

XLVIII Գիտութիւն, արուեստ ու ողջ բնութիւն
Թող ազդեն վերաս լար ու մշտակայ—
Ինչպէս վերևից լոյսը դողդոջուն
Ցոլում է յուզուած ծովակի վերայ։

Թող մեզմ ալիքներ հոգոյս մէջ ծփան,
Միտքս ստանայ ազատ թև ու թիռ.
Թող հնչէ երգըս մեղմ սիւգի նման՝
Եւ վհատ սրտիս ներշնչէ գրգիռ։

Ե՛կ, տես, ու անցիր, բայց մի՛ անհամբեր
Դատիլ այդ սիւգը, որ փշրում է մերթ
Այդ լոկ—արտաքուստ փայլող ալիքներ,
Եւ խաղում թեթև ստուերների հետ։

Այս անրջային յոյս ու վախի տակ,
Աւաղ, թաղուած է թախիծ անպատում
Ուր որ հոսում է արցունքի վտակ՝
Այնտեղ եւ կեանքը արժատ է բռնում։

XLIX Ո՜հ, կեցիր ինձ մօտ, երբ մութը պատի,
Երբ իմ արիւնը չը հոսի-գնայ,
Սիրտս թուլանայ և շունչս հատի,
Կեանքիս անիւը կանգ առնի-մնայ։

Ո՜հ, կեցիր ինձ մօտ, երբ իմ խեղճ հոգին
Հոգսից անզօր է, վիճակիս անել,
Երբ ժամանակի հաստափիւռ փոշին
Եւ կեանքի բովը դեռ ինձ չեն յաղթել։

Ո՜հ, կեցիր ինձ մօտ, երբ ես յուսահատ
Կորցնեմ հաւատքս ու տխուր, տրտում
Նայեմ ճանճերին, որոնք անընդհատ
Երգում, խայթում են և ապա մեռնում։

Ո՜հ, կեցիր ինձ մօտ, երբ թմրի իմ թև,
Սուրբս վար գցեմ կեանքի կռուի մէջ
Երբ յանկարծ մթնի իմ կեանքիս արև,
Եւ մարին աչերս ու փակուին անվերջ։

L Ա՞րդեօք ցանկանանք, որ մեր սիրելիք

Ցետ դառնան մեզ մօտ միւս աշխարհից.
Բայց չէ՞ որ պիտի ամաչենք սաստիկ,
Երբ տեսնեն մեր մէջ արատներ ու բիծ։

Նա՞, որ ինձ համար միշտ գովելի էր,
Ինձ կշտամբելիս՝ լռում էի ես—
Նա՜ գայ ու տե՞սնէ իմ ծածուկ մեղքեր,
Որ ինձ չը սիրէ էլ առաջուայ պէս։

Թող գերեզմանը ահ չըտայ մարդուն,
Սէրըն էլ առանց հաւատքի լինի՜.
Վսեմ մահուան մէջ կայ իմաստութիւն,
Ննջեցեալք թող ինձ քննեն մի առ մի։

Ո՜հ, կացէք ինձ մօտ լաւ ու վատ օրում,
Դուք Աստուծոյ պէս—ոչ թէ մեզ նման,
Փախչող ժամերը ուղիղ էք դատում,
Որ ներող լինիք տկար մարդկութեան

LI Քեզ ինչպէս սիրեմ իմ ուզածիս չափ
Ո՛չ դէմքդ եմ տեսնում, ոչ լսում քո ձայն...
Իսկ իմ խօսքերը՝ յողդողդ ու անկապ,
Եռացող մտքի փրփուր են միայն։

—«Բայց տխուր երգդ մի դատիլ սխալ»,
Սիրառատ հոգին պատասխան տուաւ,
«Մեղք ու սխալդ ինձ վնաս չեն տալ,
Դու ինձ քո կողքից չես շարժիլ բնաւ։

Ինչով մի հոգի կապրի շարունակ
Իր իդեալի մէջ քաջ ու անվրդով.
—Մի՞թէ Սիրիայի ջինջ երկնքի տակ
Անմեղ անցկացրած ձիգ տարիներով։

Անմիտ աղջկայ պէս մի լար գլխիկոր՝
Թէ մեղսալից է կեանքը վաղանցուկ.
Դիմացիր, կը գայ եւ քո հունձքի օր,
Երբ կոշտ կեղևից կը հանուի միջուկ»։

LII Ես շատ հայրեր եմ տեսել իմ կեանքում,
Ջահել հասակում թէև ցոփակեաց,
Բայց հիմայ պարկեշտ մի կեանք են վարում

Ուրախ ու զուարթ թոռներով պատած։

Ինձ թըւում է՝ թէ չէ կարող ոչ ոք
Միշտ հարթ կեանք վարել ու ապրել հանդարտ—
Զը հերկուած դաշտը կըտա՞յ մեզ արդեօք
Այն հունձքը, որից գէթ կապրի մի մարդ։

Միթէ՞ հաժոդուինք ու փաստ հաժարենք,
Թէ խոպան կեանքից օգուտ կայ մէկին.
Եւ ո՞վ կը ճառէ այդ տեսակ օրէնք
Խեղճ մարդոց համար, որ հանգիստ չունին։

Բարին պինդ բռնիր, ու կշռիր դու քաջ,
Որ Աստուածային օրէնքը ազատ
Անշէջ դժոխքի իշխանի առաջ
Պաշտօն չը վարէ որպէս կին կաւատ։

LIII Թող վստահ լինինք, թէ ամեն չար կիրք,
Ահ ու տարակոյս ու վիշտ երկրային,
Կամքի մեղքերը ու բուռն արհաւիրք
Վերջը կը տանեն մեզ դէպի բարին։

Ոչինչ չի շարժուում զուր, աննպատակ,
Ոչ մի կեանք իզուր՝ որպէս ցնցոտի,
Զը պիտի գցուի հող ու մոխրի տակ,
Երբ Աստուած շէնքը ի կատար ածի։

Իզուր չեն որդը կոխոտում մարդիկ,
Նոյն իսկ թիթեռը չի այրուում իզուր,
Այլ առանց բարեաց չը կայ մի չարիք—
Եւ այդպէս վերջը բարի ու մաքուր։

Ոչինչ չը գիտենք, մութ է այս աշխարհ,
Բայց մի յոյս ունիմ, մի վստահութիւն,
Որ վերջ ի վերջոյ բոլորիս համար
Ջսեռից յետոյ պիտի գայ գարուն։

Բայց, ա՜խ, ինչ եմ ես—մի երազատես,
Երկչոտի մէկը—խոր մթութեան մէջ,
Կամ թէ անլեզու մի մանուկի պէս,
Որ լոյս է ուզում ու գոռում անվերջ։

LIV Մարդ փափագում է, որ կեանքը մնայ
Գերեզմանից դէն ողջ ու ապահով.
Արդեօ՞ք դորանից յայտնի չէ թէ Նա
Ստեղծեց մարդը բուն իր պատկերով։

Մայր—բնութիւնը դէ՞մ է Արարչին,
Որ մեզ խաբում է այսպէս չարաչար—
Ասես անփոյթ է մի կեանքի մասին,
Իսկ «տեսակներին» կարծես—հոգատար։

Եւ երբ քննում եմ հետաքրքրալից
Այդ մայր—բնութեան գործքը ու գաղտնիք,
Տեսնում եմ՝ ինչպէս յիսուն հատիկից
Ծլում, աճում է միայն մի հատիկ։

Ես կանգնած էի անսայթաք ու քաջ.
Բայց, ա՜խ, վայր ընկայ խոնջ ու կարեվէր
Աշխարհիս բեմի սանդուղի առաջ,
Որ մութ վայրերով տանում է մեզ վեր։

Մերթ թերահաւատ մի մարդի նման
Ժողում եմ բուրբս աւազ ու փոշի,
Եւ մերթ վերջապէս կանչում եմ Նորան,
Որ թըւում է ինձ՝ տէր ամեն բանի։

LV Ինչ՞ չ, «տեսակները» աճում են միթէ—
Ո՛չ, բնութիւնը ձորէն ու սարէն
Գոչում է, գոռում, «ինձ ոչինչ փոյթ չէ,
Բիւր—բիւր տեսակներ, կորել են արդէն»։

Եւ բնութիւնը ասում է կարծես,
«Մարդ, ո՞վ ես, որ դու գանգատուիս ինձ դէմ,
Ես եմ կեանք տալիս, ահ բերում նոյնպէս,
Հոգիդ մի շունչ է. այլ բան չըգիտեմ»։

Ի՞նչ, ո՞վ, միթէ Նա—մարդը պերճախօս,
Դէմքը գեղեցիկ, աչերը՝ խոհուն,
Նա՞, որ ցուրտ երկրում երգում է սաղմոս,
Եւ սիրտը շինում սին աղօթքի տուն,

Նա՞, որ վստահ է, թէ սէր է Աստուած,
Եւ սէր է երկրի հիմքը անսասան,

Ինչ, բնութիւնը հեգնօրէն կանգնած՝
Սրէ՞ նորա դէմ ժանիք ու ճիրան.

Նա՞, որ տանջւում է միշտ սիրոյ համար,
Եւ ճշմարտութեան զինւոր է արի—
Նա՞ պիտի լինի հողին հաւասար,
Երկաթէ լեռան ծոցի մէջ թաղուի։

Նա՝ ոչինչ ուրեմն, աննուագ մի ձայն,
Մի դատարկ երազ, հրե՞շ գիշակեր...
Կամ միթէ՞ մարդին համարենք միայն
Տղմի մէջ պառկող վիշապի ընկեր։

Ո՛հ, խօսէ՝ ձայն տուր, գէթ մի խրախոյս,
Կեանքը անհիմն է, մի պատկեր անձեւ.
Նա չունի ուրեմն ապագայ և յոյս
Սև քօղի ետև, սև քօղի ետև։

LVI Թո՛ղ գերեզմանը, բարեկամ, ու եկ,
Շատ երկրային են քո տխուր երգեր.
Եկ, ու մի՛ ողբալ այդպէս վշտաբեկ,
Ցաւ կտաս նորան, որ սիրելիդ էր։

Ի՞նչ գունատ ես դու, եկ, գնանք ի բաց,
—Գնամ էլ սիրտըս աստ մնայ պիտի.
Նորա դիակը լաւ է ամփոփուած,
Այստեղ մնալըս էլ օգուտ չունի։

Բայց ես լսում եմ ամեն ժամանակ
Մահգոյժ զանգակի ձայնը վշտանար՝
Թէ անհետացաւ մի քաղցրիկ էակ,
Որի նմանը չի տեսել աշխարհ։

Այո, լսում եմ հրաժեշտի այդ ձայն,
Որտեղ էլ լինիմ - միայն այդ հնչիւն...
Իսկ *) «Աւէ—Աւէ»-ն այս ասաց միայն՝
Ցը նոր տեսութիւն, ցը նոր տեսութիւն։

LVII Տխուր խօսքերով հրաժեշտ տուի,
Ձայնըս հնչում էր տխրութեամբ անվերջ—

*) Կաթոլիկ եկեղեցու ժամերգութիւնից է առնուած, որ նշանակում է «ողջ, բարեաւ կամ յաջողակ մնաս»։

Ինչպէս հնչում են խուլ ու ահռելի
Ծոր-ծոր կաթիլներն դամբարանի մէջ։

Եւ իզուր տեղից այս իմ վայնասուն
Հանգիստ չէր տալիս անհոգ ամբոխին,
Որ միայն ունի կէս-գիտակցութիւն
Մութ գերեզմանի ու ժահուան մասին։

Վեհ Մուսան ասաց՝ «քո լացով ինչո՞ւ
Միամիտ մարդկանց ցնցում ես այդպէս,
Մի քիչ համբերիր, կաց ինձ մօտ, և դու
Աւելի ազնիւ հրաժեշտ կառնես։

LVIII Կուզես դու, ով վիշտ, կենակցել ինձ հետ—
Իբրև կողակից, ո՛չ թէ հարճի պէս,
Որ լինիս կեանքիս պահապան ու դէտ,
Եւ իմ կարիքը ճշտիւ կատարես։

Կուզես գգուել ինձ նոր հարսի նման,
Եւ մեղմել այս իմ հրատապ արիւն,
Զընայեն վերաս միշտ այդպէս դաժան,
Թէ կուզես լինիմ հեզ ու իմաստուն։

Իմ բուռն եռանդը չը խամրէ պիտի,
Այլ վառ կը մնայ ամեն ժամանակ.
Միայն թէ կուզեմ՝ մի ընկերուհի
Մերթ գար ու խաղար հետըս միայնակ։

Ո՛վ վիշտ, անբաժան կապրենք միասին,
Քեզ կը զարդարեմ յուսոյ վարդերով,
Ես քո անունը չեմ յայտնիլ մէկին,
Քեզ չի՝ ճանաչիլ աշխարհումս ո՛չ ով։

LIX Մեռաւ այն անձը—ամենից ազնիւ,
Որին սիրել եմ ու սիրում եմ դեռ
Մի խեղճ աղջկայ պէս, որ ամբողջ սրտիւ
Սիրում է մէկին՝ ծագումով շատ վեր։

Փեսան մեծազարմ, շրջանը ազդու,
Աղջիկը աղքատ, գլուխը միշտ կոր.
Նէ նախանձոտ է, չը գիտէ ինչու,
Իրան զգում է բոլորից ստոր։

Անժիտ դրացիք մինչև իրիկուն
Գալիս—գնում են և հեգնում իրան.
Մթնումն ողբումէ՝ «ես խեղճ ու նկուն,
Նա ինչ՞պէս սիրէ ինձ պէս աղջիկան։»

LX Թէ սաւառնումէ վերին աշխարհքում
Երկրային բեռից փրկուած քո հոգին,
Թէ պըտըտումես իմաստնոց շարքում,
Որոնք մարդկութեան ծաղիկներն էին,

Թէ դու՝ վերևից նայումես վերաս,
Եւ տեսնում՝ ինչպէս խեղճ եմ ու վհատ—
Որպէս մի գաճաճ կամ մի բոյս տհաս՝
Ցուրտ ու խաւարից թոշնած ու գունատ—

Ասոյս մի՛ տալ, նայիր դէպի մեր երկիր,
Ուր դու ծնուեցար, կայիր մի անգամ—
Ինձ չափ ոչ մի անձ—նոյն իսկ Շեքսպիր
Չէ կարող սիրել քեզ, ով բարեկամ։

LXI Բայց եթէ մի աչք թաց ու տխրալի,
Կարող է վերադ անախորժ ազդել,
Թող այն ժամանակ սէրըս դադարի՝
Իբրև մի սուտ վէպ ու հին առասպել։

Դու ինձ թւումես այն մարդու նման,
Որ երբ տղայ էր, գէթ՝ զիջողաբար
Սիրումէր մի սիրտ՝ ցած ու անարժան.
Բայց յետոյ թռաւ մի ուրիշ աշխարհ,

Ուր գտաւ մէկին իրան դասակից,
Մինչդեռ մեռնումէ իր սէրը նախկին.
Բայց իր լուսավառ ու ծով—աչերից
Կը սահի հիմայ ժպիտ երկնային։

LXII Թէ գութ ունենանք դէպի յոգնած ձին
Եւ դէպի շունը՝ մեր տան յարկի տակ,
Դա բեռ չի լինիլ երբէք մեր սրտին,
Եւ չի խանգարիլ մեր վեհ նպատակ։

Չ՞է որ դորանցից աւելի եմ ես,
(Թէկուզ ինձանից դու էլ աւելի)

Բայց դարձեալ դորանց գգումեմ այնպէս,
Որ իրանց ցաւը շատ խիստ չը լինի։

Ա՜խ թէ դու այդպէս վարուէիր ինձ հետ,
Սրբէիր երբեմն իմ աղի արցունք—
Դու, որ երկնքում շարժումես յաւէտ
Խորքերից խորքեր, բարձունքից բարձունք։

LXIII Նայում ես դու յետ հեռու անցեալին—
Ինչպէս գերագոյն հանճարեղ մի մարդ,
Որ մի ժամանակ որպէս գիւղացին
Դաշտ էր դուրս գալիս և հերկում իր արտ։

Բայց ստոր ծագման ցանկը պատռելով՝
Քաջասիրտ ճանկեց քղանցը բաղդի.
Եւ կուրծքը ցցած դէպի բուք ու ծով՝
Իր չար աստղի դէմ մաքառեց արի։

Եւ դարձաւ մի մարդ հմուտ ու զգօն,
Եղաւ պետութեան զօրաւոր գործիք.
Ստեղծեց նոր կարգ, օրէնք ու կանոն,
Եւ դարձաւ գահին դէտ ու զօրաւիգ։

Իվեր ու իվեր ձգտեց անդադար,
Եւ կեանքի կուռում առաւ մրցանակ.
Դարձաւ իր ազգի սիւն ու ղեկավար,
Եւ ողջ աշխարհի տիպ ու օրինակ։

Բայց հիմայ նստած լուռ ու կիսաքուն,
Գործնական կեանքի կռիւներից զերծ՝
Դիտումէ խան՝դոտ քաղցրախօս առուն
Եւ բնիկ լեռը ձիգ ու բարձրաբերձ,

Ուր մի ժամանակ գնումէր յաճախ
Իր հասակակից գիւղի տղոց հետ—
Այնտեղ սարքելու ձկի—զօրախաղ՝
Նորանք իբրև զօրք, ինքը—զօրապետ։

Եւ այդ խաղի մէջ կայի ես նոյնպէս,
Որ դեռ հնձում եմ իր ցանած արտեր.
Եւ լուռ ինքըս ինձ մերթ հարցնում եմ ես՝
«Ցիշո՞ւմէ նա ինձ—նա՝ իմ հին ընկեր։

LXIV «Սէրը անմահ է, սէրը թանկագին,
Ոչինչ սէրիցը չըպիտի կորչի» –
Այսպէս երգեցի, երբ ինձ պատեցին
Բուք ու փոթորիկ, հողմեր կատաղի։

Եւ այդպէս պիտի անվհատ երգեմ,
Մինչև փարատի կասկածի սև ամպ,
Որ իմ խոհերը՝ վառ ու երկնաձեմ,
Թոչել կարենան լի վստահութեամբ։

Քեզ հետ բարեկամ դառնալէս իվեր՝
Սէրըդ եղել է ինձ թև ու թիկունք,
Թող նոյնպէս քո մէջ սերմանած իմ սէր
Աճէ ու մղի քեզ դէպի բարձունք։

LXV Դուք զարմանումէք, որ այսպէս ունայն
Ես աշխատումեմ ցրուել իմ թախիծ.
Դուք ինձ կարծումէք այն մարդու նման,
Որ ախորժումէ մի չնչին բանից։

Այն մութ ստուերը, որ պատեց իմ անձ,
Եւ սիրտս դարձրեց անապատ կարծես,
Ինձ խրատ տուաւ, որ սիրեմ մարդկանց՝
Աչքերի լոյսից զրկուած մարդու պէս,

Որին թև իթև տանումեն փողոց,
Որ կատակումէ ուրախ շրջանում,
Առնումէ գիրկը փոքրիկ տղայոց,
Եւ նորանց հերքը ձեռքին փաթաթում,

Որ երազումէ երկնքի մասին,
Եւ մեղմ օրօրում բազկաթոռի մէջ.
Թէկուզ խաւարը պատել է խեղճին,
Բայց ներքին լոյսը մնումէ անշէջ։

LXVI Երբ մահիճս իվեր փայլումէ լուսինն,
Գիտեմ, որ նոյնպէս տապանքդ իվար
Արևմուտքումը—հեռու ծովափին,
Իջնումէ մի շող ջինջ ու լուսավառ։

Փայլում է եւ քո մարմարէ շիրիմ,
Երբ փորագրուած տառերի միջով

Սողումէ շողը՝ գաղտուկ և ուշիմ—
Մահ ու ծնունդիդ թիւը ցոյց տալով։

Անցնում-գնումէ այդ շողը, այդ հուր,
Թէքուումէ լուսինն եւ իմ անկողնից.
Յոգնած աչերս փակուում են ամուր,
Մինչև արևը ծագումէ նորից։

Գիտեմ՝ արևը կը սփռէ իր շող
Ծովափից ծովափ վաղ – առաւօտեան,
Եւ մութ տաճարում նոյնպէս քո կոթող
Պիտի փայլէ որպէս ուրուական։

LXVII Քունը, որ կախեց գլուխս բարձին,
Թէկուզ մահուան հետ երկւորեակ եղբայր,
Բայց չէ ճանաչում մահը բնաւին—
Ես էլ չեմ կարծում, թէ դու մահացար։

Քեզ հետ քայլումեմ քնիս մէջ լռիկ
Յողապատ ճամբով դէպի սար ու ձոր՝
Ճիշտ ինչպէս առաջ. և այդեան հովիկ
Աւետումէ մեզ մի պայծառ նոր օր։

Բայց, ախ, ինչ է սա—տեսնումեմ, որ դու
Խոր թախիծ ունիս քո հեզ աչերում,
Տխրեցի եւ ես, չը գիտեմ ինչու,
Եւ իմ երազը ոչինչ չէ պարզում։

Բայց դեռ արտոյտը դաշտը չը թողած՝
Վեր թռայ քնից, հարցը պարզուեցաւ—
Զար ու անհեթեթ քունս անկասկած
Հաղորդել էր քեզ հնօրեայ իմ ցաւ։

LXVIII Կարծեցի՝ չի գալ զարունը նորից,
Կորցրեց բնութիւնն վաղեմի իր ոյժ,
Դուրսը փողոցում՝ ցուրտ ու ծխալից,
Բարբանջում էին մարդիկ խուժաղուժ։

Փախայ անտառը խիտ ու փշալի,
Այդ աղմկալից փողոցէն հեռու,
Այնտեղ ճակատիս փշեր կապեցի՝
Իբրև թէ պակ մի քաղաքացու։

Տղայ ու մանուկ և ծեր միասին
Ելան իմ դէմը ծաղը ու ծանակով,
Դուրսը շուկայում իրար ձայն տուին՝
«Տեսէք մի անմիտ փշէ պսակով»։

Գորգոռում էին՝ «այ քեզ մի խելառ»....
Մութ էր. վար իջաւ մի լոյս հրեշտակ—
Ձայնը մեղմ հնչիւն, աչերը՝ պայծառ,
Եւ ժպտաց անուշ, երբ տեսաւ իմ թագ։

Նա ձեռքը մեկնեց ու իմ այդ փշեր
Փոխեց տերևի հէնց նոյն վայրկեանում.
Թէկուզ իր ձայնը տխրաոիթ ձայն չէր,
Բայց իր խօսքերը չէի հասկանում։

LXIX Թէ և նայումեմ վերադ աչալուրջ.
Բայց պարզ չեմ տեսնում երեսիդ գծեր.
Պարապ դիմակներ խռնուումեն քո շուրջ,
Դէմքիդ թառել է անթափանց ստուեր։

—Բրգաձև մի ամպ, վհուկի տան պէս...
Մի վիհ, որ բացուում, փակուումէ անվերջ.
Վերուղղեալ մի ձեռք և գունատ երես՝
Մտքի աշխարհի մութ անցքերի մէջ։

Կնճռոտ դէմքերով խռնուած մի ամբոխ
Ճեղքում—անցնումէ բացուած դռներից.
Տեսնումեմ նոյնպէս՝ մարդիկ սրտադող
Անսահման եզրին նստած կից առկից։

Յանկարծ կուրծքիս մէջ հնչեց ակամայ
Դիւթիչ մի նուագ մեղմ ել և էջով,
Եւ մխիթարիչ քո դէմքը տեսայ
Հոգոյս վանդակի ճաղերի միջով։

LXX Ով քուն, ցեղակից խեւութեան, մահու,
Եւ նման՝ մտքի յափշտակութեան.
Ներկան անցեալի փոխարկեցիր դու,
Երբ շրջումէինք բարեխառն Գաղղիան։

Այդ էր սպասում հոգին քեզանից,
Տուր եռապատիկ քնաբեր դեղրանք,

Թմրեցրու վիշտս կոյր ու ժահրալից,
Որ ես ունենամ լիուլի հրճուանք

Թող զրոյց անենք ինչպէս անցեալում
Մարդու գոյութեան և մտքի մասին,
Տեսնենք՝ ինչպէս են օրերը փոխուում,
Եւ անցեալի պէս շրջենք միասին։

Այն անտառապատ գետակի ափով—
Լեռներից լեռներ, ամրոցից ամրոց,
Տեսնենք ջրվէժներ ահագին թափով,
Եւ լսենք ալեաց աղմուկ ու գոռոց։

[1]) LXXI Խաւարից ծնուած դու սև առաւօտ,
Էլի ես ծագում ու ոռնում կրկին,
Դուռ ու ապակին բաղխում ես կրքոտ,
Ուժգին հարուածով խորտակում սօսին։

Դու ծանր բեռով, վշտով անպատում
Սեղմեցիր մէջքս, ճնշեցիր իմ լանջ.
Դու թոյն ծածկեցիր վարդի կոկոնում,
Մարեցիր խպառ արևի ճառագայթ։

Տխուր ժամերի կարապետ ես դու,
Առատ արցունքիդ կաթիլների տակ
Վարդը ծեծուում է, դու օր ահարկու,
Եւ ահից փակում իր կարմիր բաժակ։

Դու բարձրանում ես արևելքն իվեր,
Եւ փչում այգեան հովը զովարար,
Դու ծաւալում ես թրթռուն ստուեր
Լեռների լանջին, բայց, ա՜խ, ինձ համար

Կը մնաս նոյնը—դաժան ու խոռվ...
Սեւ օր, այն զազիր յանցանքը ունիս,
Որ ժամանակի ժահաոիթ նետով
Վար տապալեցիր իմ բարեկամիս։

Մռայլ օր, դէ՜հ, տար գործդ մինչև վերջ

---

[1]) Բարեկամի մահուան († 1833 Սեպ. 15-ին) առաջին տարեգարձի առթիւ գրուած։

Սև ամպով ծածկիր վաղորդեան աստղիկ.
Ցրուիր դէս ու դէն, սփռիր օդի մէջ
Անքաղ պտուղներ և դալար ոստիկ։

Բարձրացիր՝ մինչև քո մռայլ [1]) զէնիտ
Գոռ ու գոչումով, չարագոյժ դու օր,
Գնա ու հասիր քո նպատակիդ,
Բայց չարութիւնդդ թագցրու դու խոր։

LXXII Ի՜նչ լայն ասպարէզ, ինչ՜ շատ աշխարհներ,
Դեռ շատ գործ ունին մարդիկ անխտիր.
Դու զօրեղ էիր ու ճշմարտասէր,
Ով գիտէ ինչի սահմանուած էիր։

Վերադ ունէի յոյսեր վարդագոյն,
Աւաղ, զրկուեցար դաբնէ պսակից,
Բայց չեմ անիծում մահ ու բնութիւն,
Ո՞վ պիտի խոյս տայ օրէնքի տակից։

Մարդիկ գնումեն այն մռայլ ճամբով,
Որ խոտ ու սէզով շատ շուտ է ծածկւում.
Աստուծուն միայն յայտնի է, թէ ով
Ինչ՜ գործ կատարեց հեռու անցեալում։

Կորչի համբաւը – դա սուտ է ու սին,
Բայց թող զարգանայ այն ոյժ ու հանճար,
Եւ յաւէտ ապրէ այն զօրեղ հոգին,
Որ մերթ վատնումէ կեղծ փառքի համար։

LXXIII Երբ մարդ նայումէ միշտ ակնկառոյց
Մի մեռած մարդու սրտառուչ դէմքին,
Տեսնումէ այն՝ ինչ չի տեսել վաղուց,
Թէ նա նման է իր տոհմից մէկին։

Հիմայ, սիրելիս, ցուրտ են քո այտեր,
Բայց քեզ ծանօթ եմ, գիտեմ՝ դու ինչ ես—
Այժմեան իմաստնոց հաւասար ընկեր,
Եւ քո հանճարեղ նախնիքներիդ պէս։

Բայց ես ամեն ինչ չեմ կարող տեսնել,

[1]) Փոխ. գագաթնակէտ։

Իսկ իմ տեսածը չը պիտի պատմեմ.
Մահուան մանգաղը կտրեց կեանքիդ թել,
Բայց դէմքդդ դարձրեց սիրուն ու վսեմ։

LXXIV Երգիս չի ճառում քո գովք ու ներբող,
Թէկուզ կը մեղմէր իմ կսկիծ ու սուգ,
Թողնումեմ վշտիս համաչափ եղող
Քո մեծութիւնը—իբրև հանելուկ։

Ու՞ր է այն պօէտ այնքան շատ ճարտար,
Որ իր խօսքերով ամեն ինչ պարզէր.
Ու՞ր է այն երգիչ, որ կարողանար
Քաղցրալուր երգով ցոյց տալ քո պատկեր։

Չեմ ուզում եւ ես այս սահուն կեանքում
Ձայներ հնչեցնել, որ չեն մնայուն,
Այլ լոկ քամու պէս փոշի են շարժում,
Ո՜ւր մնաց՝ գովեն քեզ ըստ արժանոյն։

Վաղաժամ թօշնեց դաբնիդ ծաղկեթել,
Իսկ մարդկանց համար այս երկրում երբէք
Գին չունի այն՝ ինչ կարող էլ լինել,
Այլ ինչ եղած է—դա ունի արժէք։

Ո՞վ պիտի այստեղ քեզ գնահատի,
Բայց այնտեղ, որ մարդ չի տեսել բնաւ,
Ինչ որ կատարես, հռչակեն պիտի,
Եւ բարձրահնչիւն պատմեն քո համբաւ։

LXXV Թէ առ խանդավառ, սլացիր իրաց,
Մի վարկեան դարձրու դէմքդդ դէպի վեր,
Ուր սուր ասեղի ծայրերից կազմուած
Մի վառող ծով է աստղազարդ եթեր։

Դարցրու հայեացքդդ դէպի ապագան—
Անդունդից անդունդ համարձակ ու քաջ,
Բայց, ա՜խ, լռումէ երգդդ յաւիտեան՝
Գեղձը փտելուց աւելի առաջ։

Բնութեան երգեր վաղ արշալուսին
Հեռու են վանում գիշերուան խաւար.
Կաղնին չը հասած իր կեանքի կէսին՝

Քո երգը արդէն առնումէ դադար։

Կաղնին միշտ կանաչ — գէթ յիսուն գարուն,
Բայց, ո՜հ, քո երգը ինչ՞քան կարճատև...
Միթ՞է կը լսուի քո երգի հնչիւն,
Երբ կաղնուց մնան լոկ ճախ ու կեղև։

LXXVI Ներկայիս երգից ի՞նչ յոյս ունենայ
Նա, որ խորհումէ լուրջ ու ակնդէտ
Մեր երգի մասին, մեր կեանքի վերայ,
Եւ գիտէ պիտի չքանան անհետ։

Այս գրքոյկը՝ լի տխուր երգերով,
Լոկ կազմի համար գուցէ պէտք լինի։
Գուցէ մի աղջիկ դորա թերթերով
Ոլորի մազը ու խոպոպ շինի,

Կամ գորան գտնեն հին զամբիւղի մէջ
Շատ գարերից յետ, և կարդան գուցէ
Վաղուց մոռացուած հին սիրոյ մի էջ,
Որի գրողը նոյն իսկ յայտնի չէ։

Բայց փոյթ չէ, ես՝ իմ ճամբին փշալից,
Պիտի նուագեմ ու երգեմ քնքոյշ—
Կորուստ պատմելը լաւ է սին փառքից,
Եւ սէր շեշտելը՝ համբաւից անուշ։

LXXVI Մենք հիւսում էինք [1]) ծննդեան տօնին
Նորից միատեղ ծաղիկներ ու վարդ.
Ձիւնը ծածկել էր լեռներ ու գետին,
Իրիկունն անցաւ սեղմիկ ու հանդարտ։

Եւ տօնածառը փայլումէր այդ տան,
Քամի չէր շարժւում դաշտերի վերայ.
Բայց յիշեցնումէր ինձ ամեն մի բան,
Թէ իմ սիրելիս թռաւ, էլ չըկայ։

Պար էինք գալիս, կայթում վար ու վեր,
Եւ երգում ուրախ՝ ինչպէս անցեալում,
Ցոյց տալիս իրար սիրուն նկարներ,

[1]) Այս ծննդեան տօնին իր բարեկամի մահից երկու տարի էր անցել։

Եւ աչքակապուկ ու գնտակ խաղում։

Այս տօնին չը կար ոչ վիշտ, ոչ սարսափ,
Ո՛չ մի արտասուք, ոչ նշան սուգի—
Կարող է վիշտը քիչանալ այն՞չափ,
Որ ոչնչից էլ դեռ պակաս լինի՞։

Ի՜նչ, կարելի՞ է չքանայ մեր վիշտ...
—Ո՛չ, չըկայ մի բան դորա պէս յամառ,
Դա այրումէ մեզ, տոչորումէ միշտ,
Մինչ մեր աչերը ցամքում են իսպառ։

LXXVIII «Իմ եղբայրներից դու աւելի ես»—
Այս խօսքից դու մի խռովիլ, ընկեր,
Գիտեմ քո հոգին վսեմ է այնպէս,
Որ քեզ վայել է բարձրագոյն մի սէր։

Սակայն դու և ես մէկ ենք ծագումով,
Նոյն դրոշմն ունինք մայր—բնութիւնից.
Եւ դաշտ ու անտառ, լեռ, հովիտ ու ծով
Մեր մէջ թողել են նոյն հետքեր ու գիծ։

Եւ նոյն աղբիւրն էր, որ մեր երկուսին
Իր մրմունջներով հրճուանք էր տալիս.
Եւ նոյն զեփիւռն էր, որ վերջալուսին
Մեզ հետ անուշէր ուրախ ասուլիս։

Յաճախումէինք եւ մի դասարան,
Եւ մէկ տեղ ծծում մայր—երկրի ստինք.
Դեռ մեր սև ու շէկ հերքը մանկական
*) Մէկ գոյն չը ստացած՝ մենք բաժանուեցինք։

Ինչ ես՝ ունէի՝ ունէիր դու էլ,
Թէև ես՝ աղքատ, դու՝ հարուստ—բայց հեզ.
Միշտ պատրաստ էիր իղձիս կատարել,
Անմոռան ձիրքդդ քաշումէր ինձ քեզ։

LXXIX Ստէպ ծագումէ իմ մէջ սին փափագ—
Ա՜խ թէ մեռնէի Արթուրից առաջ.
Եւ ամփոփուէին խոնաւ հողի տակ
Այս իմ աչերը՝ արցունք չը թափած։

*) Այսինքն չը ծերացած, մազերը չը ճերմակած։

Ինձ թւում է՝ թէ Արթուրիս համար
Մեր բաժանումը կը լինէր—աղէտ.
Բայց եւ ստոյգ եմ՝ նա հաշտ կը մնար
Թէ այս աշխարհի, թէ Աստուծոյ հետ։

Ես կը տեսնէի իր դէմքը սիրուն,
Երկրից կը հասնէր ձայնը ականջիս.
Սուգի օրերը կը տանէր տոկուն,
Նոյն իսկ սև օրից կօգտուէր սիրելիս։

Այո, վստահ եմ այդպէս կը վարուէր.
Իսկ հիմայ՝ հրաշք—նա իր տապանից
Կարկառում է ինձ մահատիպ ձեռքեր,
Ամոքում իմ վիշտ, ցրւում իմ թախիծ։

LXXX Կարող էի ես, երբ նա ինձ մօտ էր,
Ասել, թէ սէրըս էլ չի զարգանալ՝
Միթէ՞ չէր կարող քաղցրանալ իմ սէր—
Արդէն հասուն էր, արդէն կատարեալ։

Դիցուք թէ սէրըս աճէր աւելի—
Սակաւ կլինէր իմ այժմեան այս վիշտ.
—Այս միտքը, թէ ես յետոյ շատ պիտի
Սիրէի նորան—ճնշում է ինձ միշտ։

Իսկ մահը այսպէս պատասխան տուաւ,
«Եթէ չը լինէր իմ սառնամանիք,
Սիրոյ պտուղը չէր հասնիլ բնաւ,
Կամ գուցէ տօթից թառամէր սաստիկ»։

LXXXI Ինչո՞ւ մահուան դէմ կռուեմ շարունակ,
Թէ մեր դէմքերը դարձնում է գունատ—
Ո՛չ մի հէգ կեանքի կազմալոյծ դիակ
Չը պիտի խախտէ իմ յոյս ու հաւատ։

Հոգին շարժւում է օդապար իր թև—
Շրջանից շրջան, եթերից եթեր,
Բեկանուտ մարմնից թռչում է վերև՝
Ինչպէս բոժոժից շերամի թիթեռ։

Մահուան դէմ չունիմ ոչ մի ասելիք,
Որ խլեց երկրից այն առաքինուն.

Գիտեմ մարդկային ներքին արժանիք
Միայն տեղ տնկուած՝ պիտ ծաղկէ սիրուն։

Այս բողոքն ունիմ մահուան դէմ միայն,
Որ սիրտըս լցրեց բարկութեամբ անբաւ,
Եւ մեզ իրարից հեռացրեց այնքան,
Որ իրար խօսքեր չենք լսում բնաւ։

LXXXII Ա՛րի, ով գարուն, եկ՝ այցելիր մեզ,
Շտապիր, ու եկ, վա՜ր իջիր, ա՜խ, վա՜ր—
Մայր—բնութիւնը սպասում է քեզ,
Մի զրկիլ նորան այդպէս չարաչար։

Ո՛չ մի շահ չիկայ մռայլ օրերից,
Բացուիր, ով գարուն, ցրուիր մեր աղէտ.
—Կարող են միթէ՞ տաղնապ ու թախիծ
Ապրել միասին Ապրիլ ամսի հետ։

Բեր քեզ հետ շուշան, դու պայծառ Մայիս,
Զարդարիր դաշտեր, լեռ ու ձոր փարթամ.
Ա՜խ, բեր ցողապատ կակաչ ու նարսիս,
Յափրուկ, ձնծաղիկ, վարդ ու շահոքրամ։

Դու իմ ինչ ուշացար, եղանակ սիրուն,
Չէ՞ որ կուշանան եւ իմ ցաւ ու վէրք։
Ա՜խ ինչքան կուզէ իմ պաղած արիւն
Սառուցը կոտրել ու սկսել իր երգ։

LXXXIII Երբ մտմտում եմ մեն ու միայնակ
Այստեղ անց կացրած քո կեանքի վերան,
Եւ խորհում՝ ինչպէս քո մտքի փայլակ
Պիտի բոլորէր լուսնեակի նման։

Տեսնում եմ գլխիդ լուսածիր մի խոյր
Եւ Աստուածային մի կրակ անշէջ,
Որ սփռում էր սէր, ժպիտ ու համբոյր,
Եւ շարժում արիւնդ երակներիդ մէջ,

Եւ քո արեան հետ նոյնպէս իմ արիւն—
Իմը և քոնը կարծես մի ակից...
—Դու շուտով պիտի տանէիր քո տուն
Հարսըդ նազելի, քոյրըս սրտակից։

Եւ քո մանուկը իմ ծնկին նստած՝
Պիտի թոթովէր՝ «քեռի, իմ քեռին»,
Բայց, ա՜խ, այն օրը սև ու ամպամած
Ինձ դարձրեց անյոյս, քեզ—հողի բաժին։

Քո դեռ չը ծնուան կայտառ մանկիկներ
Պիտի դարձնէի սիրոյս առարկայ.
Ես կը լինէի իրանց խաղընկեր,
Կը հաժրուրէի, կը տայի ընձայ։

Ես հիւր կը գայի, և դու սիրալիր
Երգ կըստեղծէիր ինձ հետ շարունակ,
Թև թևի տուած՝ հետըս կանէիր
Հոգեշահ զրոյց, վայելուչ կատակ։

Եւ մարդիկ պիտի գովէին ինձ հետ
Քո ազնիւ վաստակ, քո գործը բարի.
Եւ վարդ—արևը մայր մտնելուց յետ՝
Կրկին մի նոր օր լուսանար պիտի -

Բաղդաւոր մի օր—անցած օրուայ պէս...
Այդպէս թարմացած՝ պիտի օրէօր
Ձգտէիր դէպի վայրերը անտես,
Մինչև դառնայիր ծեր ու ալևոր։

Թէկուզ վերայիդ կաւէ պատմուճան
Քեզ—քիչ կը մաշուէր, բայց եւ օգտակար
Եղած կը լինէր հանուր մարդկութեան,
Իսկ հոգիդ պիտի թռչէր ու գնար։

Եւ այդ քո հոգուն կը փարէր հոգիս
Սիրոյ ու վշտի ամուր կապերով—
Այստեղ կը ձգտէր սուրբ նպատակին,
Եւ վեր կը թռչէր անյայտ ափերով

Քոնի հետ մէկ տեղ դէպի ջինջ եթերք.
Ն՛ա, որ սուրբ երկրում զոհ եղաւ անմեղ
Պիտի տարածէր լուսաշող իր ձեռք,
Եւ մեզ բարձրացնէր անծանօթ մի տեղ։

—Սիրտ իմ յետադէմ, դա մի եղեգ է,
Որին դու իզուր յենուումես այդպէս.

Հին ցաւերը շարժել արժան է միթ՞է,
Լաւ է՝ մի ուրիշ յենակէտ ընտրես։

LXXXIV Այս ճշմարտութիւնն պարզ ու կատարեալ
Ես սովորել եմ մահուան ստուերից—
«Աւելի լաւ է սիրել ու ողբալ,
Քան ոչ մի ճաշակ չունենալ սէրից։»

Ով դու, որ մինչ ցարդ կրել ես տանջանք,
Թէկուզ անխարտախ մի կեանք ես վարել—
Հարցնում ես՝ ինչ՞ կերպ գտնես սփոփանք,
Կամ ես իմ վիշտը ինչ՞պէս եմ տարել.

Հարցնումես՝ արդեո՞ք իմ վիշտը դաժան
Վառե՞ց թէ մարից յոյսը առ Աստուած,
Արդեո՞վ Արթուրիս սիրել եմ այնքան,
Որ այլոց համար էլ սէր չը մնաց։

—Խօս՛քեր ողջախոհ, խօս՛քեր ճշմարիտ,
Հնչումեն ազդու, հնչումեն համեստ—
Լսիր, բարեկամ, քո այդ հարցերիդ
Ահա պատասխան պարզ ու անարուեստ։

—Կեանքըս սահումէր մեղմ ու անվրդով,
Մինչև լուր հասաւ, թէ իմ սիրելիս
Ննջեց յաւիտեան մահատիպ քնով՝
Աստուծոյ մատը նորան տիպչելիս։

Այն մեծ ակումբը մեզանից վերև,
Անմահ հոգիներ, խումբ երանելի
Ոսկէ դռան մօտ կանգնած թևիթև՝
Ասացին նորան, «գալուստդ բարի»։

Եւ տարին նորան վայրեր երջանիկ,
Ցոյց տուին նոյնպէս վճիտ վտակում
Այն գիտութիւնը, որ մարդոց որդիք
Այստեղ ձեռք բերել չեն կարողանում։

Իսկ ես մնացի այստեղ յուսահատ,
Կեանքըս ապարդիւն, միտքըս յոռետես.
Եւ երբ շրջումեմ դաշտ ու անապատ,
Նորան եմ տեսնում ամեն տեղ կարծես։

Օ՜իմ բարեկամ, ընկեր սիրասուն,
Օ՜ սիրտ, որ ունիս սիրավառ կրակ.
Օ՜ դու երկնային անբիծ գոյութիւն,
Դու, որ կրում ես յաղթութեան պսակ։

Ո՞վ է, որ ինձ չափ ստոյգ գիտենայ,
Թէ ինչ կը դարձնէ մեր կամքը—անյաղթ,
Որ մենք այս կեանքի լայն բեմի վերայ
Մրցենք ու ժեռնինք քաջ ու բարեբաղդ։

Ինչ էլ որ լինի իմ մութ ապագաս,
Թէկուզ մեն-մենակ, բայց զգում եմ միշտ,
Թէ նա ինձ հետ է, հարթում է ճամբաս,
Եւ վառում հոգիս, ամոքում իմ վիշտ։

Նա՝ իմ սիրելիս, որին վեհ ժուսայք
Տուել էին ձիրք ու ճարտար լեզու,
Որ նուրբ մտքերին տար գաղտնի համայք,
Եւ խօսքն ու երգը լինէին ազդու—

Նա՝ ինձ օգնում էր, նա՝ իմ աչքի բիբ,
Որ չար բան չանեմ, չը սարքեմ սև դաւ,
Սէրը գծում էր իմ առջև մի տիպ.
Եւ մի ջինջ պատկերք ու ժեղմում իմ ցաւ։

Եւ ժտացածին իմ վիշտ ու տագնապ,
Որ սիրում էին յուզել իմ հոգին,
Եւ ողջ կեանքիս մէջ ծաւալել սարսափ—
Ինձ խորտակելու անկարող էին։

Եւ հիմայ սիրտս զարկում է զուարթ
Ուրիշ ինձ ծանօթ մարդկերանց առաջ
Արդեօք չեմ լինիլ անարժան մի մարդ,
Թէ ողբամ անյոյս ու լալառաչ։

Ցոյսը դարձնում է մեզ—մարդ. ով [1]) ընկեր,
Արդ մեզք է՝ մնամ միայնակ ու հէգ,
Ուստի տածում եմ դէպի քեզ մի սէր
Որ ժամանակից չի յաղթուիլ երբէք։

[1]) Նոր ընտրած ընկերը, որին նոյնպէս խոստանում է մի անյաղթ սէր,

Այս սէրը պիտի մնայ միշտ հզօր,
Մնայ աներկիւղ, կայտառ ու աշխոյժ,
Զեն յաղթիլ դորան չար բաղդ ու սև օր,
Այլ պիտի պահէ կազդուրիչ իր ոյժ։

Բայց երբ կանաչեն ձոր, հովիտ ու թումբ,
Գարնանը ուռչին գետերը վարար,
Եւ երբ ագռաւներ աշնանը խումբ-խումբ
Տժգոյն անտառում խառնուին իրար,

Եւ երբ հողմերը շառաչեն անվերջ,
Ալիք ու յորձանք բարձրանան վէտ-վէտ,
Եւ իմ հին սէրը գերեզմանի մէջ
Նորից արթնացնեն, կանչեն դեպի յետ—

Ես այն ժամանակ կը լսեմ մի ձայն—
Ընկերիս ձայնը՝ մեղմ ու սիրալիր,
Որ կասէ՝ «սիրտ ունիս, մի ողբալ ունայն,
Գնա, քեզ համար նոր ընկեր ընտրիր։

Այս լուռ ափերից տեսնում եմ ես քեզ,
Հոգիդ կարող է սաւառնել ինձ մօտ,
Միայն թէ բաղդը միշտ թողել է մեզ
Իրար հետ անձամբ խօսալու կարօտ»։

Իսկ ես կը հարցնեմ կարող է արդեօք՝
Այս երկրի թուխպը ծածկել ջինջ եթերք,
Չէ՞ս կարեկցում ինձ, ինչո՞ւ ես անհոգ,
Դու, որ ցաւ չունիս, բայց ես՝ սրտի վէրք։

Եւ ես կը լսեմ մի փոքրիկ շշուկ՝
«Այդ հարցի խորքը չի հասնիլ մեր խելք,
Մեր գոյութիւնը՝ այս գիտեմ ստոյգ,
Պիտի ունենայ բաղդաւոր մի ելք»։

Այսպէս՝ ըզգում եմ, որ մօտս է յաւէտ
Մեռած ընկերս իբրև խօսակից.
Վիշտս խաղում է սիմվոլների հետ
Եւ մնունդ առնում սին անուրջներից։

Իմ նպատակը որոշ է հիմայ,
Ինչ անցաւոր է՝ կանցնի մի անգամ.

Բայց սէրը սէրին պիտի միանայ—
Ուստի ներիր ինձ, ով իմ բարեկամ,

Որ ես՝ թէև քեզ սիրում եմ անկեղծ,
Դարձեալ չեմ կարող՝ ինչքան էլ ուզեմ
Փոխանցել վերադ այն սէրը անեղծ,
Որ նորա համար միշտ զգացել եմ։

Բայց ո՞վ է արդեօք, կամ ո՞ր մի սիրող
Իր ուխտը պահել մինչև ծերութիւն,
Ո՞վ է իր սէրը, ոսկեղէն այդ օղ—
Առաջին սէրը պաշտպանել տոկուն։

Իմ մէջ չի մարել սրբազան այն բոց,
Այլ դեռ յիշում եմ տխուր ու տրտում
Նորա տաք կուրծքը, նորա գիրկ ու ծոց,
Բայց, ա՜խ, ոտքերի ձայնը չեմ լսում։

Ո՛չ, ո՛չ, իմ սիրտը՝ որբացած վաղուց,
Չի հանգստանում վաղեմի սիրով,
Այլ հիմայ կուզէ մի անկիւն, մի խուց,
Մի կուրծք կամ մի լանջ՝ տաք ու ապահով։

Օ, ընդունիր դու այս աշնան ծաղիկ,
Իբրև մի պարգև, թէկուզ անարժան,
Թէկուզ ո՛չ թարմ է և ո՛չ գեղեցիկ.
Բայց գարնան ծաղկի շատ ու քիչ նման։

LXXXV Ով մեղմ իրիկուն՝ յորդ անձրևից յետ,
Որ փալփլում ես վարդ-վերջալուսին,
Օդը անուշ է, զով ու խնկաւէտ,
Ջոջում են թփեր, բուրում է գետին։

Քո մեղմ զեփիւռը ցրւում է անա
Դաշտ ու անտառից ժանտ գոլորշիներ.
Եւ եղջիւրաւոր գետակի վերայ
Դու տարածում ես թրթռուն ստուեր։

Օ, հովահարիր եւ իմ խոնջ ճակատ,
Քշիր այս տենդը իմ տապ այտերից.
Օ, մի՛ թող, որ ես հէգ ու յուսահատ
Այսքան ցաւ կրեմ և այսքան կսկիծ։

Թող հոգիս թռչէ դէպի ջինջ կամար,
Որ հանգչեմ զուարթ հոգիների մօտ,
Ուր արուսեակը սիրուն ու պայծառ
Մեզ գուշակում է մի նոր առաւօտ։

LXXXVI Թափառում էի շուկայից շուկայ
Մի քաղաքի մէջ խիստ աղմկալի,
Մի բարձր շէնքի դռան մօտ հասայ,
Ուր մի ժամանակ ուսանող էի։

Տեսայ գիտութեան տաճարը նորից,
Ուր շրջում էին տղայք վար ու վեր,
Երգեհոնների գոռ հնչիւններից
Դղրդումէին սրբոց պատկերներ։

Նորէն լսեցի ջրերի խոխոջ
Եւ թիակների ծափաձայն բաղխիւն,
Տեսայ գետափին ուռիներ դողդոջ,
Լսեցի կանաչ մարգի սոսափիւն։

Մի և նոյն ծառեր, մի և նոյն կամուրջ,
Մի և նոյն տունը, ուր նա էր ապրում,
Բայց այդ բոլորը թւում էր անուրջ,
Մի դռան առջև կանգնեցի տրտում։

Դռան վերայ կար մի ուրիշ անուն...
Ես դուրսը կանգնած կմախքի նման,
Իսկ տղայք ներսը՝ գոհ ու զուարթուն,
Թխկացնում էին դուռ ու պատուհան։

Բաբէ՜, այստեղ էր, որ մենք՝ միասին
Մի խումբ ընկերներ, տաք վիճումէինք
Գործ ու արուեստի, գիտութեան մասին—
Հոգեպ՜աշտ մարդիկ, ազգա՜սէր անձինք։

Մէկը իր ամբողջ միտքը լարելով՝
Հազիւ էր պարզում վէճի առարկան,
Իսկ մի ուրիշը խելօք փաստերով
Ճգնումէր յանգել մի հետևութեան։

Բայց նա՝—սիրելիս՝ հանճարեղ ու ժիր—
Նա գիտէր հարցը մեզ համար պարզել.

Մենք լսումէինք նորան ուշադիր—
Խօսքերը սահուն, ազդու ու վայել։

Նա բացատրում էր հարցը կէտ առ կէտ,
Ձայնը հնչումէր մեղմ նուագի պէս
Եւ Աստուածային հուրը լուսաւէտ
Վառումէր նորա վեհաշուք երես։

Ճակատը բարձր և դէմքը պայծառ,
Հոգին երկնաճեմ ու միտքը զգօն,
Աչերը խոհուն, ունքերը կամար—
Կարծես թէ լինէր անմահ Անգելօն։

LXXXVII Ով վայրի թռչնակ, որ երգումես յար
Դրախտի երգըդ փշէ թուփն ի վեր,
Ասա, որտեղ են խառնըւում իրար
Տարբեր խինդ ու խանդ ու տարբեր կրքեր։

Արդ՞եօք բուռն կրքից եղար, ով թռչնակ,
Այն՞քան յեղյեղուկ, ա՞յնքան ծայրահեղ,
Որ աշխատում ես քո հէգ կուրծքի տակ
Հրճուանք ունենալ վշտի հետ մէկ տեղ։

Իմ կրքոտ վիշտը այդպէս անպայման
Զըպիտի տիրէ սրտիս լարերին,
Այլ կը փափագիմ եւ մայր—բնութեան
Իմ երգը ձօնել ու թռչել յերկին։

LXXXVIII Ով դիւթիչ կնձնի, դու մարգի վերայ
Լոյս ու ստուերով խաղումես կարծես.
Եւ դու թթենի բարձր ու հսկայ,
Դու ձգուած ես վեր աշտարակի պէս։

Օ՛քանի անգամ սիրելիս Արթուր
Ապաստան գտաւ ձեր շուքի տակ,
Ուր մոռանումէր օրուայ ծուխ ու մուր,
Քաղաքի շոքը, ճիչ ու աղաղակ,

Ուր լուռ նայումէր շքեղ բնութեան,
Եւ մեր խաղերին լինում մասնակից,
Երբ նա թողնում էր [1]) օրէնքի ատեան

[1]) Իրաւագէտ էր։

Եւ մեկուսանում դատ ու վէճերից։

Ի՜նչ զովարար էր հանգստեան այդ վայր,
Ծառերը կանաչ ու ստուերախիտ.
Օդը անուշակ, և ծայրէիծայր
Խնկաբոյր դաշտեր, դալարուն հովիտ։

Ցրւումէր հոգսը ամեն անգամին,
Երբ սուր մանգաղը շարժւում էր դաշտում,
Եւ այդիի մէջ խստաշունչ քամին
Հասած տանձերը ներքեւ էր թափում։

Ի՜նչ երանութեան, երբ նա՝ կարդումէր
Մեծ տոսկանացու երկերը ընտիր,
Մենք նստում էինք շուրջը, վար ու վեր,
Եւ լսում նորան լուռ և ուշադիր։

Ի՜նչ երջանկութիւն, երբ զուարթ մի հիւր
Իրիկուան դէմին երգում էր ուրախ,
Իսկ լուսնկային բաղդաւոր մի քոյր
Քընարի վերայ ածում էր յաճախ։

Եւ վազվզելիս դէպի սար ու ձոր՝
Մենք զգումէինք ոչ սակաւ հաճոյք,
Եւ խիտ անտառում—ամառուայ ձիգ օր—
Վայելումէինք մեր փոքրիկ խնջոյք։

Եւ դատում էինք երկրի կարգն ու դիրք
Պետութեան կազմը անխնայ—բայց լուրջ.
Եւ քննումէինք խորիմաստ մի գիրք,
Եւ մտքով հիւսում սոկրատեան անուրջ։

Բայց նա սիրում էր հերքել իմ կարծիք,
Երբ պարծում էի քաղաքի կեանքով—
«Դա է՝» ասում էր, «այն մեծ աղօրիք,
Որ ջախջախումէ մեր ներքին կորով։

Կեանքի իմաստը ջնջում է խպառ
Եւ տալիս դորան արտաքին մի ձև...»
Այդպէս խօսալով՝ գնում էինք վար
Դէպի գետակը՝ մեզանից ներքև։

Ուշ երիկունը կամ վաղ առաւօտ

Հեռու դաշտերից դառնում էինք գիւղ—
Ոհ ինչ պարզ երկինք, ինչ կանաչ արօտ,
Գոյն—գոյն ծաղիկներ, դալար ծառ ու ճիւղ։

Լուռ ու ժունջ էին դաշտ ու արտորայք,
Միայն թէ մեղուն բզզում էր անվերջ,
Եւ թփի ետև գիւղացի կանայք
Կաթ էին կթում ամանների մէջ։

LXXXIX Նա դեռ չի առել սիրոյ անուշ համ,
Եւ դեռ չի խմել երկնաբուղխ ակնից,
Որ մարդկանց ասեց առաջին անգամ
Այս տեսակ խօսքեր բիրտ ու թունալից—

«Եթէ մեռելը յետ դառնայ յանկարծ
Իր գերեզմանից և ապրէ կրկին,
Չը պիտի ուզեն նորա վերադարձ
Ո՛չ իր որդիքը և ո՛չ էլ իր կին։

Թէկուզ երբ մարդիկ գինով տաքանան,
Մեռելի մասին խօսեն շարունակ,
Թէկուզ ափսոսեն ու յիշեն նորան,
Եւ բարձր պահեն նորա յիշատակ,

Բայց ի՞նչ կը տեսնի, երբ յետ դայ աշխարհ,
—Իր կինը արդէն օտարին յարած...
Իսկ ժառանգները՝ անողոք ու չար,
Գոյքը հեշտութեամբ չեն զնելու ցած։

Նա չի վայելիլ ո՛չ գգուանք, ո՛չ սէր,
Թէկուզ որդիքը լինին իսկ ազնիւ.
—Այդ վերադարձը պիտի պատճառէր
Մահիցն աւելի շիւան ու կոիւ։

Բայց դո՛ւ, սիրելիս, յետ դարձիր և եկ.
Թէպէտ ժամանակն փոխում է մարդկանց,
Այդ մտքերն իմ մէջ չեն մտել երբէք,
Այլ միշտ քեզ պիտի փափագէ իմ անձ։

XC Երբ կը կանաչի վարդագեղ սոճին,
Եւ նոր նոր կըսկսէ տորդիկը երգել,
Երբ կը ցատկոտէ մայրամի տակին

Մարտի թռչնակը մոյգ ու ոսկեթել—

Յետ դարձիր ու եկ այն կերպարանքով,
Ուր մի ժամանակ նկարուած տեսայ
Քո պայծառ հոգու յուսավառ կորով,
Որ խոստանում էր փայլուն ապագայ։

Ե՛կ, երբ նոր կը սկսէ ամառուայ հովիկ
Ալ-ծաղիկների բոյրից համեմուած՝
Շարժել դաշտային մեր հացահատիկ,
Եւ շոյել հանդը մեր լայնատարած։

Մի գալ գիշերը, ցերեկը արի,
Երբ արեգակը փայլում է պայծառ,
Արևի լոյսից ջինջ ես աւելի,
Եկ, որ քո լոյսը փայլէ վառ ի վառ։

XCI Թէ ինձ մի տեսիլք ցոյց տար քո պատկեր—
Այդ կը կարծէի իբրև զառանցանք,
Կամ իբրև ցնորք այլանդակ ու խեղ—
Թէ և լեղու գար ու պատմէր այն կեանք,

Որ մենք վարեցինք իրար հետ անհոգ՝
Դարձեալ ես պիտի խորհէի ինքնին—
Դա յիշողութեանս մի քամին է լոկ,
Որ շշնչում է անցեալի մասին։

Կամ թէ տեսիլքը յայտնէր կանխօրէն,
Թէ ինչ-ինչ բաներ պատահեն պիտի,
Եւ այդ բաները դիցուք կատարուեն
Մի քանի ամսում ճիշտ ու մի առ մի—

Այդ չէր թուիլ ինձ—մարգարէութիւն,
Այլ լոկ հոգեկան մի նախազգացում—
Մերթ շատ բաներ են յայտնւում մեր հոգուն,
Որ կատարւում են մօտ-ապագայում։

XCII Միթէ՞ ես նորից չեմ տեսնելու քեզ.
Մի հոգի չեղա՞ւ, որ պատառելով
Բաժանող պատը՝ յետ դար դէպի մեզ
Այստեղ, ուր ստաջ շրջում էր մարմնով։

Թէև չեմ՝ տեսնում հիմայ ընկերիս,
Բայց էլ տեսնելու չը կա՞յ ոչ մի յոյս,
Զէ՞ որ ջղերըս թմրած լինելիս՝
Հոգին իջնում է ու փարում հոգուս։

Իջիր, եկ։ ով դու ընկեր հոգեկից,
Այդ քո վայրերից անտես ու հեռու.
Իջիր, այդ վերին կապոյտ խորքերից,
Այստեղ ի՞նչ անհաս, ի՞նչ տարբեր եռ դու։

Իջիր բարեկամ, և մնայ ինձ մօտ,
Ա՜խ թէ այս ձայնըս հասնէր ականջիդ,
Թէև խօսքըս թոյլ, աչերըս աղօտ։
Բայց հոգիս կըզգայ, թէ մօտ է հոգիդ։

XCIII Ի՜նչ մաքուր մի սիրտ, ի՜նչ սէր կատարեալ
Պէտք է ունենայ այն մարդը, որ գէթ
Մի ժամ կարենայ սերտ կապ ունենալ,
Եւ հոգով շփուել ննջեցեալի հետ։

Զո՞ւր ես վար կանչում այն հոգիներին
Որ կեանք են վարում գոհ ու բերկրալից,
Եթէ նորանց պէս նոյնպէս քո հոգին
Չի՞ ասում՝ «գոհ եմ այս իմ վիճակից»։

Նորանք մտնում են լոկ այն սրտի մէջ,
Ուր բուն են դրել ջինջ յիշատակներ,
Ուր կան խոհերի ազատ ելև էջ,
Ուր կայ մաքուր խիղճ, ուր կայ անկեղծ սէր։

Բայց երբ քշում է մի սիրտ դէս ու դէն,
Սև կասկածները այդտեղ դռան մօտ—
Նորանք լոկ դուրսը կանգնած կը լսեն
Ներսի անախորժ աղմուկ ու շփոթ։

XCTV Գիշերը դաշտում պտըտում էինք
Ջոր ու կիսախանձ խոտերի վերայ.
Հանդարտ ու զով օ՜դ, միգապատ երկինք—
Ո՜հ ի՜նչ հաճելի տեսարան էր դա։

Մեղմ վառում էին ճրագներ շքեղ,
Ձէր լսում նոյն իսկ ծղրիդի մինջիւն.

Միայն բզզում էր հեշտաեռն այնտեղ,
Եւ հեռից լսում առուի կարկաչիւն։

Ցանկարծ չղջիկը սըլանում էր վեր.
Ցատկոտում էին ու փախչում անհետ՝
Լոյսից ահաբեկ, փոքրիկ էակներ—
Բրդ՞ոտ, բազմաչ՞եայ ու խայտաբղե՞տ։

Եւ մեր երգերը հին ու բերկրալիր
Զիլ—հնչում էին արօտից արօտ,
Ուր նշմարւում էր պառկած մի նախիր,
Նոյնպէս ծառերի ստուերներ աղօտ։

Մի անգամ, երբ շատ գիշերից անցաւ,
Հիւր ու բարեկամ հեռացան ինձնից,
Ամէն մի ճրագ գիւղումը հանգաւ,
Եւ իմ հէգ սրտին պատեց խոր կսկիծ—

Ցանկարծ սիրտ իթունդ դուրս հանեցի ես
Հին նամակները մեռած ընկերիս,
Որոնք անթառամ տերևների պէս
Պիտի յիշեցնեն գարունը կեանքիս։

Անձայն խօսքերը, թէ ինչ՞պէս—չ՚գիտեմ,
Ձայն արձակեցին խոր լռութեան մէջ.
Մունջ սէրը կարծես ժամանակի դէմ
Յաղթութիւն տարած՝ պատմեց ինձ անվերջ

Այն մեծ հաւատքից, որ վանում էր միշտ
Նորա վեհ կեանքից ամե՞ն տարակոյս,
Պարզում մութ հարցեր, մեղմում ցաւ ու վիշտ—
Եւ տալիս իրան ճշմարտութեան լոյս։

Եւ ամէն մի խօսք կամ ամեն մի տող
Կարծես շիրիմից բերաւ մի ողջոյն.
Եւ նորա հոգին—երկնային մի շող
Իջաւ ու փարեց իմ թմրած հոգուն։

Հոգիս մոռացաւ այս ունայն աշխարհք,
Նորա հոգու հետ թռաւ ջինջ երթերք,
Եւ կարծես լսեց այն երակի զարկ,
Որ պինդ պահումէ ամբողջ տիեզերք։

Եւ լսեց այն հին, դարեւոր նուագ,
Որ չափուէ ճիշտ կեանքը մարդկային,
Մահի հարուածը, ժամ ու ժամանակ.
Բայց, ա՜խ, մի կասկած յուզեց իմ հոգին։

—Ո՛չ արուեստ ունիմ, ո՛չ զօրեղ մի ձայն,
Այլ միայն խօսքեր՝ անորոշ ու բիրտ,
Ո՛չ էլ կարող եմ միտքըս բերել այն,
Ինչ մի ժամանակ վառուած էր իմ սիրտ։

Անցաւ գիշերը, փալփլեց երկիր,
Նորէն նայեցի արօտից արօտ,
Ուր նշմարեցի մի պառկած նախիր,
Նոյնպէս ծառերի ստուերը աղօտ։

Եւ արշալուսին վաղորդեան մի հով
Սկսեց կաքաւել բարձունքից բարձունք,
Սուրաց ու անցաւ թթենու միջով,
Տարածեց խփիւռ մշկահոտ բուրմունք։

Եւ հետզհետէ թարմ ոյժ ստացած՝
Օրօրեց կնձնին, թռաւ հև իհև,
Եւ վարդի թուփը ցնցեց ու ասաց,
«Ահա նոր արև, ահա նոր արև»։

Մեղմ հովը լռեց, լուսացաւ աշխարհ,
Եւ մութ արևմուտքն ու ջինջ արևելք՝
Որպէս մահ ու կեանք միացան իրար,
Եւ հոգիս զգաց անվախճան վայելք։

XCV Ո՛վ սիրուն աղջիկ, որ տխրումես դու,
Երբ նկատումես ջրահեղձ ճանճին,
Դու ինձ ասում ես առանց հեգնելու,
Թէ սև կասկածն է—սատանի որդին։

—Զը գիտեմ, բայց ինձ ծանօթ էր մի մարդ
Որ կասկածոտ էր. և երգը առաջ
Պարզ չէր ու ախորժ, այլ խրթին ու բարդ,
Բայց ճշմարտութեան զինուոր էր նա քաջ։

Թերահաւատ էր. բայց վարքը—բարի,
Վերջապէս երգը հնչեց ներդաշնակ—

Անկեղծ կասկածը լաւ է աւելի,
Քան մարդահընար ծէս ու հանդանակ։

Նա կասկածների կռուի մէջ այդ լուրջ
Հաւաքեց նոր ոյժ՝ ժիր ու քաջազէն,
Մերժեց զանազան ցնորք ու անուրջ—
Ոչինչ չէր ուզում դատել կուրօրէն։

Այդպէս՝ նա հաւատք գտաւ քաջաբար.
Եւ մթութեան մէջ նա մօտ էր իրան—
Նա, որ ստեղծեց եւ լոյս եւ խաւար,
Նա, որ չէ կենում լուսոյ մէջ միայն,

Այլ եւ ամպի մէջ, որով պատումէր
Սինայի լանջը, կատար ու խոռոչ—
Մինդեռ Իսրայէլ ծուլում էր կուռքեր,
Թէ և հնչում էր փողը բարցրազոչ։

XCVI Իմ սէրը խօսեց քար ու ծառի հետ.
Ո՜ւր էլ նայում էր՝ իրան էր տեսնում.
Իր շուքը շքեղ տեսնում էր յաւէտ
Մութ ու միգապատ լեռնավայրերում։

Երկու ամուսին—մի զոյգ բաղ՜դաւոր...
—Այդ՜պէս քեզ ու ինձ համարեցի ես՝
Դու մի տեղ անյայտ ու խորհրդաւոր,
Իսկ այս իմ հոգին կիրն լինէր կարծես։

Աչք աչքի յառած իրար նայելիս՝
Նորանց սրտերը սրբոփում էին,
Եւ Դեկտեմբերը դառնում էր Յունիս,
Իսկ բաժանումը ժամ էր երկուսին։

Եւ նորանց սէրը՝ ո՜չ, չի վերջացել,
Ինչ էլ որ խօսէ նենգամիտ խուժան.
Նէ, որ անցեալը դեռ չի մոռացել—
Պարզ փաստ է, որ նա սիրումէ նէրան։

Նա գնաց ջոկ տեղ, նէ մենակ մնաց,
Նա դեռ սիրումէ, նէ պէտք չէ որ լայ.
Թէ նորան տեսնի խոր—յափշտակուած,
Թող նէ չը կարծէ, թէ հեգնումէ նա։

Նա կոխ է տալիս մտքի բաւիղներ,
Եւ լուրջ դիտում է աստղերի ընթացք.
Նա մ՛օտ է թւում, բայց ի՞նչ հեռո՞ւ էր.
Եւ նէ սիրում է նորա ցուրտ հայեացք։

Որպէս յիշատակ դեռ պահում է նէ
Անցեալ օրերից թառամած մի վարդ.
Նորա մեծութեան չափը չը գիտէ,
Բայց եւ սիրում է նորան անաղարդ։

Նորան է ձօնում նէ երգ ու նուագ,
Եւ յիշում իրանց հին ուխտ ու պայման
Նէ սոսկ առանին գործերից տեղեակ.
Բայց նա իմաստուն. նա գիտէ շատ բան։

Նէ հաւատում է. բայց չը գիտէ քաջ,
Թէ ինչ մեծ է նա, և ինչ՞քան վսեմ.
Նայում է նորան հեզ ու բարեհաճ՝
—«Հասկնալ չեմ կարող, բայց սիրել գիտեմ։»

XCVII Դու մեզ թողեցիր, որ Ռէյնը տեսնես,
Եւ այն թուփերը՝ պերճ ու լուսաշող,
Ուր մերթ նորա հետ շրջում էի ես,
Եւ ուր աճումեն ցորեն ու խաղող,

—Եւ այն քաղաքը, ուր նա մահացաւ,
Ուր մերթ եղել ենք ես, նա—միասին.
Բայց հիմայ կարծես դորա հին համբաւ
Խոտի նման է—Լեռէի ափին։

Թէկուզ ծփում է Դանուբը վսեմ
Ճոխ Վիէննայի կղզիների շուրջ,
Չեմ ուզում տեսնել, և ոչ էլ կուզեմ—
Այդ տեղից լաւը—երաշ ու անուրջ։

Ուր մի չար ոգի սփռում է թախիծ,
Եւ մահ ուղարկում թէ պալատ թէ խուց,
Եւ բաժանում է փեսան իր հարսից,
Ընկեր ընկերից ու հայրը որդուց։

Եւ դարան մտած՝ որսում է մարդկանց,
Լցնում տները հոգս ու ցաւերով—

Ո՛չ մի թագաւոր, ոչ աղքատ մի անձ,
Ո՛չ ոք չէ կարող լինել ապահով։

Բայց՝ այդ հոգին էր, որ ինձ ներշնչեց,
Թէ դորա նման մի քաղաք չը կայ—
Ծառուղիքը հով, արուարձանը մեծ,
Եւ անթիւ կառքեր՝ շուկայից շուկայ։

Եւ ասաց՝ «չըկայ երկնքի ներքև
Ո՛չ մի ժողովուրդ այդպէս երջանիկ.
Այնտեղ տներում ճրագի առջև
Նստած՝ երգում են բաղդաւոր մարդիկ։

Պալատների մէջ, դաշտ ու արօտում
Խումբ—խումբ պարումեն մարդ, կին թեանցուկ.
Անթիւ փափուշտներ խաղումեն օդում—
Ոչ ինչ գունագեղ, ինչ խայտաճամուկ։

XCVIII Գիւղի նախիրը գնում է արօտ.
Անուշ երգում են ուրախ թռչուններ.
Բայց ո՞ւր է, ով դու մայլ առաւօտ,
Նա, որ մարդկութեան վարդ ու ծաղիկն էր։

Օ՜ր, որ սփռում ես շողեր դէպի ծով
Եւ դէպի առուն, որ միշտ շտապաւ
Վազում է ծառոտ դաշտերի միջով,
Ուր նշմարումեմ նորան որ մեռաւ։

Օր, սրմնջումես ծառերի միջից
Մի երգ, որ վաղուայ վշտերն է հեղնում.
Բայց, ա՜խ, աշունը՝ ինչ՞ սպառնալից,
Իր մատը դէպի ծառերն է մեկնում։

Օ՜ր, յիշեցնում ես բիւր էակներին,
Որոնք շարժումեն այս երկրի վերայ,
Բեղմնաւորութեան, ծննդեան մասին.
Բայց էլ շատերին—գերեզման ու մահ։

Ո՞վ դուք մեծ ու փոքր—բևեռից բևեռ,
Ինչ էլ, որ լինիք, ինչ տեղ էլ որ կաք—
Ես համարում եմ ձեզ ինձ համասեռ,
Ինձ չէք ճանաչում, բայց հետս կողքաք։

[1]) XCIX Բարձրացայ լեռը և ծայրէ իծայր
Տխուր հայեացքով ես վար նայելիս՝
Չը տեսայ մի կէտ, չը տեսայ մի վայր,
Որ չը յիշեցնէր իմ բարեկամիս։

—Ո՛չ ագարակը, ո՛չ գոմ ու գաւիթ,
Եւ ո՛չ ճահիճը եղեգով պատած,
Ո՛չ նեղ ճամբաներ՝ հովիտից հովիտ,
Ուր երևում են հօտ ու խաշնարած,

Ո՛չ այն ըլրակը, ուր փշերի մէջ
Փոքրիկ սարեակը երգում է իր տաղ,
Ո՛չ, քարահանքը, ուր մղում են վէճ
Սև ագռաւները իրար դէմ յաճախ։

Ո՛չ այն աղբիւրը, որ հոսում է վար
Վէմ–ապառաժից դէպ մարգագետին,
Եւ ուր հովիւը–հօտին հոգատար,
Ջուր է խմեցնում իր ոչխարներին։

Դու այս վայրերը սիրում էիր միշտ.
Բայց այս բոլորին երբ նայում եմ ես,
Ինձ համակում է մի այնպիսի վիշտ,
Որ կարծես հէնց նոր դու մեռած լինես։

C Անխնամ պիտի ծառ ու ճիւղ թեքուին,
Եւ ծաղիկները թափթփին ի վար.
Կենազուրկ պիտի թօշնի հաճարին,
Եւ ձիգ չինարին խամրի խորշահար։

Սիրազուրկ պիտի արևածաղիկ
Ճօճէ դէս ու դէն իր սկաւառակ.
Անշըշունչ պիտի ամառուայ հողմիկ
Լեցնէ դաշտերը բոյրով անուշակ։

Անխնամ պիտի աւազի միջով
Առուակը հոսէ դէպի դաշտավայր—
Թէ ցերեկը տաք, թէ գիշերը զով,
Երբ պսպղում է երկինքը անծայր։

[1]) Այս և C, CII տ. երգերով հրաժեշտ է տալիս իր հայրական տանը, ուր ծնուած ու սնուած էր։

Անտէրունչ պիտի հեղեղուի անտառ,
Ուր բոյն են դրած արագիլ ու ճայ,
Եւ ջուրը հոսէ դէպ թուփ ու մացառ,
Մինչև որ հարթէ իր համար ճամբայ,

Մինչ կամաց-կամաց այդ դաշտ ու այգին
Հանդէս կը բերեն մի նոր տեսարան,
Մինչ կընտելանան այդ դաշտավայրին
Օտար այցելուն, օտարի տղան,

Մինչև գիւղացին ամեն մի տարի
Կը փորէ հողը, կը մաքրէ առուն,
Եւ հետզհետէ իսպառ կը մարի
Կամ կը նուազի մեր յիշողութիւն։

CI Ա՜խ, պէտք է թողնենք այս տուն ու դղեակ,
Ուր աչք ենք բացել գոհ ու երջանիկ.
Ա՜խ, այսուհետև այս տան յարկի տակ
Պիտի ընակուին անծանօթ մարդիկ։

Բայց նախ ես կուզեմ ման գալ վար ու վեր—
Այս ծառաստանում՝ խիտ ու պտղատու.
Մրցում են իմ մէջ երկու ոգիներ
Սիրոյ մէջ իրար գերազանցելու։

—Մէկը ասում է՝ «այստեղ երգեցիր
Առաջին անգամ քաղցրալուր քո երգ,
Այո, այստեղ է քո ընիկ երկիր,
Ուր թռչնոց երգէն թնդում է եթերք»։

Միւսն ասում է՝ «երբ հասակ առար,
Պըտըտում էիր այս վայրը շքեղ
Բարեկամիդ հետ—հէնց դորա համար
Դու եռապատիկ սիրում ես այստեղ։

Ի՜նչ երկար տեսեց այս կռիւ ու վէճ,
Տեղի չէր տալիս մէկը միւսին.
Խեղճ մրցակիցներ՝ մի սին խաղի մէջ,
Որ այդպէս իրար նախանձում էին։

Դարձայ որ գնամ հէգ ու տխրամած,
Եւ թողնեմ ընդմիշտ այդ սիրուն վայրեր—

Ցանկարծ երկուսն էլ իրարու փարած՝
Կազմեցին մի հատ սգաղգեաց պատկեր։

CII Իմ սրտին տիրեց տխրութիւն անվերջ՝
Հայրական տանը հրաժեշտ տալիս.
Վերջին գիշերը մի երազի մէջ
Տեսայ վաղամեռ իմ բարեկամիս։

Եւ ինչ—ինձ տեսայ դահլիճի մէջ տեղ,
Իմ շուրջը կանգնած սիրուն աղջիկներ.
Մի գետ տան կողքից՝ մի կրքոտ հեղ՝եղ,
Վազում էր ներքև ու թնդում ի վեր,

Ներանք բոլորտիքս քնարի վերայ
Նուագում էին մեղմ ու քաղցրաձայն.
Եւ Ներանց առջև վար դրած տեսայ
Մի՝ քօղով ծածկուած, սիրուն յուշարձան։

Գիտեմ՝ դա ով էր, թէկուզ քօղարկուած—
Նորան սիրել եմ ու սիրեմ պիտի.
Եւ այդ միջոցին ներս թռաւ յանկարծ
Մի պատգամաբեր սիրուն աղաւնի։

Երբ Ներանք տեսան, թէ պիտ հեռանամ,
Սկսեցին հեծել դառն ու վշտակիր—
Մտան նաւակը, որ վերջին անգամ
Ինձ ճամբայ դնեն մի օտար երկիր։

Նաւակը սողաց ու թողեց ետև
Սիրուն ափերը, դաշտը գեղեցիկ.
Այս ու այն ափից՝ մեր գլխի վերև
Կամար էր կապել կապտագոյն հերիկ։

Երբ գետից անցանք դէպ ծովը անհուն,
Սկսեցին գոռալ հոսանքները յորդ.
Թարմ օդ ու նոր փայլ ստացան իսկոյն
Իմ շուրջը նստող կին ու օրիորդ։

Ես նստած էի տխուր ու տրտում,
Ներանց նայելով՝ սիրտ առայ եւ ես,
Տաք արիւն հոսեց իմ երակներում,
Եւ ինձ զգացի մի տիտանի պէս։

Մէկը երգում էր, թէ ինչ ահագին
Զոհեր է խլում պատերազմի դաշտ,
Իսկ մի ուրիշը՝ մի ազգի մասին,
Որ զարգանում է միաբան ու հաշտ։

Աւելի անսանձ, աւելի անսաստ
Գոռում գոչում էր ծովը փրփրակեզ,
Մինչ տեսանք հեռուից մի մեծ առագաստ,
Նորահարսի պէս մօտենում էր մեզ։

Նա՛, մեր սիրելին վարում էր այդ նաւ,
Զինչ աչերի մէջ անշէջ հուր ու բոց.
Ես մտայ Նորա նաւը շտապաւ,
Եւ լուռ գրկեցի Նորա պարանոց։

Բայց աղջիկները հէգ ու վշտալի
Ինձ դէմ բարձրացրին լաց ու աղաղակ—
«Մենք ծառայեցինք քեզ այսքան տարի,
Իսկ դու գնում ես, մեզ թողնում մենակ։»

Ես շատ յուզուեցայ. այդ հարցին երբէք
Չէի կարող տալ ոչ մի պատասխան,
Բայց նա՛ նա ասաց՝ դուք էլ ներս մտէք,
Գնանք միասին», և Ներանք մտան։

Նաւի ծփոցը և քամու շառաչ
Նուագներ էին կարծես մեզ համար,
Եւ բորբոսագոյն մի ամպ մեր առաջ
Ննջել էր որպէս մի դաշտանկար։

CIII Ահա մօտեցաւ Քրիստոսի ծնունդ,
Լուռ ու մունջ գիշեր, քօղարկուած լուսն՝եակ.
Թնդաց զանգակը, հնչեց թունդ իթունդ
Միակ տաճարից՝ ամպոտ լեռան տակ։

Բայց այդ հնչիւնը խանգարեց միայն
Խոր լռութիւնը ու հանգիստ իմ քուն,
Եւ իմ քար—կուրծքից բարձրացաւ մի ձայն՝
Թէ ծանօթ չէ ինձ այս զանգի հնչիւն։

Այլ դա նման է պանդխտի ձայնին
Մի երկրում, ուր նա չի տեսնում մի բան,

Մի վայր, մի սահման, որ յուզեն հոգին—
Ո՛չ մի յիշատակ, ոչ մի հին նշան։

CIV [1]) «Ծննածառ սարքել այս տոն օրերում
Ո՛չ մի հրապոյր չունի մեզ համար—
Մեզ, որ ապրում ենք այս օտար երկրում,
Ծննդեան տօնը թւում է օտ՛ար։

Մեր հօր աճիւնը՝ զատ ու առանձին,
Օտար ձիւնի տակ հանգչում է հիմայ.
Վարդ ու մանուշակ իր ժամանակին
Կը բուսնեն այն՛տեղ, բայց մենք՝ բացակայ։

Կեղծ դիմակներով վիշտը խեղկատակ
Զը պիտ այս ժամը վրդովէ ընաւ.
Փոխուել են արդէն տեղ ու ժամանակ—
Հին սովորութեան կապը խզուեցաւ։

Առօրեայ հոգսը սփռում է ստուեր,
Եւ մեր այս կեանքը փորձի ենթարկում—
Ո՛հ թէ խնայէր գէթ այս սուրբ գիշեր,
Որ դա էլ շքով թաղուէր անցեալում։

Բայց ոչ խրախճան, ոչ պարահանդէս,
Պէտք չէ տաքանալ գինու գաւաթով.
Ո՞վ կը կատարէ վաղեմի մի ծէս,
Երբ էլ չի փչում հոգեշունչ մի հով։

Ո՛չ երգենք ուրախ, ո՛չ պարենք կայտառ,
Ո՛չ փող, ոչ քնար ու ոչ մի վայելք,
Թող միայն փայլէ այն լոյսը պայծառ
Որ ոսկեզօծէ կարմիր արևելք,

Ուր փողփողում է մեր վարդ—ապագան,
Շուտով գարունը քնից կը զարթնի.
Ով սուրբ ժամանակ, չափիր քո ճամբան,
Եւ գնա հանդարտ, որ բերքըդ հասնի։

---

[1]) Այս ծննդեան տօնին բարեկամի մահից երեք տարի էր անցել. Բանաստեղծը թողել էր արդէն իր ծննդավայրը ամբողջ զերդաստանով, (Տես XC—IX—CII) և բնակւում էր մի ուրիշ տեղ։

CV Հնչիր, ով զանգակ, ձայնիդ ել և էջ
Հասնէ դէպի լեռ, հասնէ դէպի ձոր.
Տարին թաղուեցաւ խօլ խաւարի մէջ,
Հին տարին անցաւ, թող մեռնի այսօր։

Հնչիր դէպի դուրս այս մեռնող տարին,
Թող նորը ապրէ հնի փոխարէն,
Հնչիր դէպի ներս անկեղծն ու բարին,
Որ շարն ու սուտը չը յաղթահարեն։

Հնչիր դէպի դուրս վայն ու վայնասուն,
Որ բարձրացնումենք մեռելի համար.
Հնչիր դէպի դուրս ոխ ու գժտութիւն,
Որ հաշտ կեանք վարեն ուժեղն ու տկար։

Հնչիր դէպի դուրս դատարկ ձև ու ծէս,
Եւ կուսակցական հին վէճ ու կռիւ.
Հնչիր դէպի ներս բարիքներ պէս-պէս,
Եւ մարդկութեան մէջ վարք ու բարք աղնիւ։

Հնչիր դէպի դուրս զրկանք ու չարիք
Եւ ժամանակի նենգ ոգին իսպառ,
Հնչիր դէպի դուրս—տխուր մեղեդիք,
Թող մարդիկ երգեն զուարթ ու կայտառ։

Հնչիր դէպի դուրս փքուն յոխորտանք,
Սև ատելութիւն ու դառը նախանձ.
Հնչիր դէպի ներս գութ ու փաղաքշանք,
Հնչիր, որ մարդիկ սէր ցոյց տան միմեանց։

Հնչիր դէպի դուրս ունայն ձգտումներ,
Անկշտուած կիրքը դէպի մամոնան.
Հնչիր դէպի ներս հաշտութիւն ու սէր,
Ո՛չ թէ պատերազմ, այլ «հազարամեան»։

Հնչիր դէպի ներս ազատութեան երգ,
Թող հարուստը տայ աղքատին հագուստ—
Ո՛չ ոք չի մնայ հալուժաշ ու մերկ,
Հնչիր Քրիստոսի վերստին գալուստ։

CVI Այն օրը սա էր, երբ նա ծնուեցաւ—
Դառնաշունչ մի օր, մթագին և սեւ,

Մի օր, որ թեքուեց վաղ ու շտապաւ
Հոծ ու կարմրախայտ ամպերի հետ։

Այդ եղանակին՝ էր բուսնում ծաղիկ՝
Կոչ ու խնջոյքը պճնելու համար,
Ցրտաշունչ քամին փչում էր սաստիկ,
Սառցէ դաշտ՞ինները՝ ցեքերից ի վար։

Քամին ցցում էր մացառն ու փշեր
Ստեւի նման դէպ կիսալուսին,
Որ կախ էր ընկած խիտ անտառն ի վեր,
Ուր կաղնիք ցրտից ճարճատւում էին։

Եւ մտրակում էր քամին մրրկալից
Ջրի հոսանքը դէպի ծովեզերք,
Բայց եւ բերում էր գինին ծովափից—
Եկէք որ խմենք խաղողի այդ բերք։

Օ՜ն, կրակ արէք, բերէք փայտ ու ճախ,
Թող վառարանում խարոյկ գոյանայ,
Նստէք հուպ ընդ հուպ, զրուցէք ուրախ,
Որպէս թէ մեզ մօտ, մեզ հետ լինէր նա։

Տօնենք այս օրը ու խմենք գինի,
Այս տօն ու ծէսը պահպանենք անշեղ,
Խմենք կենացը—ինչ՞ էլ նա լինի,
Եւ սիրած երկը երգենք միատեղ։

CVII Չեմ ուզում խոյս տալ իմ ընկեր—մարդից,
Ես քար կը դառնամ մենակ մընալով,
Չեմ ուզում մնուել իմ ցաւ ու դարտից,
Եւ ոչ էլ օդը լցնել իմ ողբով։

Ինչ՞ շահ հաւատքից, որ չունի արդիւնք,
Որ ըղձերով է մնում շարունակ,
Թէկուզ նկրտէ բարձունքից բարձունք,
Կամ թէ ներսուզուի մահուան գետի տակ։

Ինչ՞ եմ գտնում ես արդեօք բարձրերում,
—Ո՛չ ոքի, լոկ—ինձ, որ ձօնումէ երգ.
Մահուան գուբի մէջ ինչ է երևում,
—Միայն մի հատիկ մարդկային պատկերք։

Աւելի կուզեմ վիշտ կրել հանդարտ,
Վշտեր քաշելը յատուկ է մարդուն,
Տանջանքի բովից դուրս եկած մի մարդ
Կարող է լինել լուրջ ու իմաստուն։

CVIII Նա ունէր լայն սիրտ ու բազմազեղուն—
Մի ակն, որ երբէք չէր մնում ցամաք,
Նա նկատում էր միշտ լուրջ ու արթուն
Այն՝ ինչ սիրուն էր, այն՝ ինչ ներդաշնակ։

Երկնային հանճար, հոգեկան կորով,
Ամեն մութ կասկած պարզելու պատրաստ.
Իր լսողներին իշխում էր խօսքով,
Իր ամեն միտքը կշռում էր զգաստ։

Եւ նա իրնէ սիրում էր բարին,
Բայց մռայլոտ չէր որպէս ճգնաւոր.
Եւ նորա սէրը ջինջ ու երկնային
Գարնան ծաղկի պէս թարմ էր ամեն օր։

Եւ նա սիրում էր այն ազատութիւն,
Որ վայելում է երջանիկ Անգլիան,
Ո՛չ տղայի պէս թունդ ու տաքարիւն,
Եւ ո՛չ ազգամոլ մի քէլթի [1]) նման

Նազանքը կնոջ, կորովը մարդու
Նորա մէջ իրար միացած էին.
Մի մանուկ անգամ առանց քաշուելու
Գրկում էր նորան ու սեղմում կուրծքին։

Եւ այս բոլորը տեսան իմ աչեր,
Տեսան ամեն օր, բայց, աւաղ, իզուր.
Ամօթ չէ՞ մընալ հիմայ անտարբեր,
Իմաստութիւնը էլ ո՞ւր գտնեմ, ո՞ւր։

CIX Ինչ՞ քաղցր էր քեզ հետ անել ասուլիս,
Լուռ լսում էին քեզ մարդիկ հասուն.
Թուլասիրտ անձինք դէմքիդ նայելիս՝
Բայց էին թողնում իրանց մեղկութիւն։

Գալլիայի, Բրիտանիայի, Իտալիայի և Սպանիայի նախնական բնակիչները։

Աննենգ սրտերը քեզ յարում էին,
Հպարտը քեզ մոտ խոր—խոնարհւում էր.
Շողոքորթ մարդիկ կանգնած քո կողքին՝
Զէին գործածում երկդիմի խօսքեր։

Քո ներկայութեամբ կամակոր մի մարդ
Հեզիկ լսում էր խօսքերըդ ազդու
Լիրը շաղակրատը գառան պէս հանդարտ
Ականջ էր դնում, չը գիտէր ինչու։

Իսկ ես, սիրելիս, մեկուսի նստած՝
Քո վարկ ու փառքով զմայլում էի.
Խօսքըդ վայելուչ, դէմքըդ ամօթխած՝
Որպէս ճշմարիտ մի քրիստոնէի։

Թէև չունէի քո ձիրք ու արուեստ.
Բայց սէր կար իմ մէջ՝ ջինջ ու կատարեալ.
Մի իղձ ունէի, մի փափագ համեստ—
Այն է՝ աշխատել քեզ նման դառնալ։

CX Կոպիտ մի հոգի—աղքատ թէ հարուստ,
Ին՞չքան էլ թուայ մեծ ու վեհաշուք,
Թէ հագին լինի ծիրանի հագուստ,
Ծանդեամբ արքայ. բայց սրտով—գեղջուկ,

Կոպիտ այդ հոգին ին՞չքան էլ ծածկի
Իր թերութիւնը սիրուն ձևի տակ.
Բայց եւ կերևայ գէթ երբեմնակի
Իր բնութիւնը կոշտ ու այլանդակ։

Կամ ո՞վ կարող է կեղծել միշտ յաջող—
Բայց Ն՞ա, որ թողեց բիւր յիշատակներ,
Նա, որի ներքին արժանիքը ճոխ
Մեզ երևացածից աւելի մեծ էր,

—Ընտիր էր նորա անարատ ընթացք,
Նա իր առօրեայ վարք ու բարքին կից
Ունէր եւ ազնիւ, վայելուչ շարժուածք—
Ընդաբոյս ծաղիկ՝ մի ազնիւ ստքից։

Ո՛չ նեղսրտութիւն, ոչ նախանձ ու վէճ
Զէին կնճռոտում երեսը փայլուն.

Եւ ցոլում էին ջինջ աչերի մէջ
Արարիչ Աստուած և մայր—բնութիւն։

Եւ նա կրում էր՝ գլուխը միշտ ձիգ,
Հին պատուանունը, «ջէնթլէման» տիտղոս—
Մի տիտղոս, որից օգտուումեն մարդիկ—
Անամօթ մարդիկ, սեգ ու մեծախօս։

CXI Իմաստութիւնըդ վշտից աւելի
Պարգևում է ինձ հոգևոր մնունդ—
Դեռ սաղմի մէջ է. բայց աճէ պիտի,
Որ կրթէ եւ մեր ապագայ սերունդ։

Ես, որ ամեն օր լուրջ ու անձանձիր,
Նկատում էի քո ուժեղ հոգին—
Ես հաստատում եմ՝ դու ծնուած էիր,
Ճրագ լինելու քո հայրենիքին։

Դու գործում էիր ժիր ու անդադրում
Քո ընիկ երկրի զարգացման համար.
Ազդեցիկ էիր մեր պարլամենտում,
Իսկ փոթորկի մէջ - հմուտ նաւավար։

Երբ անսանձ կրքեր, ոյժեր ահարկու
Ցոյց էին տալիս խոտորնակ գնացք,
Դու պատրաստ էիր այս երկրին տալու
Մի այլ ուղղութիւն, մի ուրիշ ընթացք։

Երբ տեսնում էիր ալեծուփ ժրրիկ,
Եւ լսում աղմուկ. կամ դատարկ զրոյց,
Դու կանգնում էիր անշարժ ու լռիկ՝
Որպէս մի փարոս ու մի ուղեցոյց։

CXII Ո՞վ, ո՞վ չի սիրել արդեօք գիտութիւն,
Դորա ոյժի հետ ո՞վ կանէ կատակ.
Ո՞վ չափեց դորա պարիսպներ ու սիւն—
Թող մեր կեանքի մէջ գործէ յաջողակ։

Դորա ճակատին վառում է մի ջահ,
Վաղում է առաջ դէպի ապագան,
Դէպի անյայտը՝ անվախ ու անահ—
Եւ ենթարկում է ամեն ինչ իրան։

Բայց դա մանուկ է—դեռ անչափահաս
Չի զօրում կռուել մահուան դէմ ազատ—
Դեւերի գանդից շինուած մի—Պալլաս,
Եթէ չընդունէ սէր, յոյս ու հաւատ։

Գոռ ու բոցավառ վազում է առաջ,
Անցնում պատնէշներ—մի քայլ ռահանդրդ։
Բայց թող իմանայ իր տեղը պատշաճ—
Ո՛չ առաջին տեղն, այլ միայն երկրորդ։

Գերագոյն մի ձեռք դորան պէտք է տայ
Մի հեզ բնութիւն, թէ ո՛չ զուր է, զո՛ւր,
Որ առաջնորդուի իբրև երեխայ
Դէպ իմաստութեան թափանցիկ աղբիւր։

Իմաստութիւնը երկնայինն, անեղ,
Իսկ գիտութիւնը երկրին է յատուկ.
Ով իմ բարեկամ, դու հասել ես տեղ,
Եւ, ա՛խ, ինձ թողել—թշուառ ու խղճուկ։

Թող քեզ նմանի աշխարհը համայն,
Դու ո՛չ թէ ունիս լոկ ոյժ ու կորով,
Ոչ թէ աճումես գիտութեամբ միայն,
Այլ խոնարհութեամբ ու անվերջ սիրով։

CXIII Ահա հալումեն ձիւնի լայն շերտեր,
Սկսումեն ծաղկել դաշտ ու տափաստան.
Եռումէ կեանքը, լսւումեն երգեր,
Հացի ծառի տակ ծաղկումէ շուշան։

Հիմայ անտառը հնչումէ անվերջ,
Պայծառ հորիզոն, սիրուն երևոյթ.
Եւ գեղգեղումէ ջինջ եթերքի մէջ
Մեր աչքից ծածկուած սիրունիկ արտոյտ։

Պարումէ շողը դաշտերի վերայ,
Հօտը վազումէ հանդից դէպի ձոր.
Առագաստները պճնումեն ահա
Ոլորտ գետերը, ծովը հեռաւոր։

Զկնորս որորը ազատ ու անվախ
Պտոյտ է տալիս, ճախրում վեր ու վար,

Յետ եկան հեռից թռչուններն ուրախ
Բոյներ հիւսելու ձագերի համար։

Մայը—հողի կուրծքից ելան վարդ ու ծիլ,
Նոյնպէս բազմազէտ այս իմ կուրծքի տակ
Կեանքը եռ եկաւ, ու եղաւ Ապրիլ—
Այդտեղ էլ բուսաւ սիրուն մանուշակ։

CXIV Արդեօք մեր անցեալ օրերի թախիծ
Գարուն սկսելիս՝ շարժումէ սաստիկ—
Թէ տալիս է մեզ, կամ առնում մեզնից
Լիաշուք գարնան փայլը գեղեցիկ։

—Ո՛չ բոլորովին, այլ քամին է դա,
Որ սուրումէ մերթ, եւ երգի հնչիւն—
Դորանք են ազդում իմ սրտի վերայ,
Եւ տալիս նոր կեանք, նոր վստահութիւն։

Եւ ո՛չ թախիծը, այլ՝ լուռ ժամանակ,
Իմ վերայ ուղղած քո քաղցր հայեացք,
Քո մելանոյշ ձայն՝ որպէս մեղմ նուագ—
Դորանք են տալիս իմ կեանքին ընթացք։

Այո, այդպէս է նորոգւում իմ կեանք,
Զքանում իսպառ հին վիշտ ու աղէտ,
Հիմայ ես ունիմ մի հատիկ տենչանք
Ուխտիս նորոգել ու ապրիլ քեզ հետ։

CXV Ով օր ու ժամեր, ինձ նորա կուրծքից
Հեռու էք պահում—ինչո՞ւ այդ արգելք...
—Արդեօք կեանքից յետ այս աղէտալից
Ունենալու եմ երկնային վայելք։

Հեռու լինելիս՝ քաղցր կըթուայ
Կրկին տեսութեան օրը ժուռալուտ
Երբ այնտեղ հասնեմ, ուր կենումէ նա,
Պիտի հասկանամ, թէ ինչ՞ մեծ օգուտ

Ունէր ամեն մի աւազի հատիկ
Եւ արեգակի ամեն մի շրջան,
Փախչող ստուերը, տարիները ձիգ,
Ամեն մի բոպէ, ամեն մի վարկեան։

CXVI Դու լաւ մտածիր, քննիր մի առ մի

Այս ժամանակի գործերն ու վաստակ.
Բայց դու մի՛ կարծիլ, թէ կորչէ պիտի
Մարդկային կեանքը՝ որպէս մի շուաք։

Մեզ այնպէս թուող մեռած—մարդիկներ
Մի կեանք են վարում աւելի ընտիր,
Եւ ձգտում դէպի վեհ նպատակներ։
Գիտունք պնդումեն, թէ այս մեր երկիր

Հեղուկ կրակից կազմուեցաւ ինքնին,
Եւ դիպուածական ձևեր ստացաւ՝
Որպէս խաղալիք անզուսպ տարրերքին,
Մինչև վերջապէս մարդը վեր կացաւ,

Աճեց, տարածուեց բևեռից բևեռ,
Եւ ճամբայ հարթեց նոր ցեղի համար—
Ասպարէզ վսեմ, գոյութիւն անմեռ—
Թէ ժամանակին հետևի յօժար,

Թէ վշտի բովից դուրս գայ ի հանդէս՝
Փայլուն ոսկու պէս զուտ ու անխարտախ,
Եւ իր ընթացքով ցոյց տայ յայտնապէս,
Թէ այս կեանքը չէ մի անպէտք մետաղ,

Թէկուզ մութ այրից ելած մի զանգուած,
Բայց ապա հալուած ահ ու վախի տակ,
Աղի արցունքի հեղեղում թաղուած,
Եւ կեանքի մուրճով ողորկուած խտակ՝

Մեր խեղճ աշխարհին մի օգուտ տալու։
—Ուրեմն վեր կաց, ու գործիր անվերջ,
Քշիր գազանին քո սրտից հեռու,
Վագր ու կապիկը թող մեռնին քո մէջ։

CXVII Դարձեալ կանգնեցի այն դռան շէմքին,
Ուր բաբախել էր շատ անգամ իմ սիրտ.
Այդ օր չէր թառել թախիծ իմ դէմքին,
Լուռ էր քաղաքը ու ամբոխը բիրտ։

Բուրում էր այնտեղ գարնան անուշ հոտ,
Եւ հնչում թռչնի երգը սիրակէզ
Քեզ օրհնումէի՝ կանուխ առաւօտ,
Միտքըս բերելով անցեալը և քեզ,

Եւ քո շրթունքներն նուրբ ու փաղաքուշ,
Եւ քո աչերը ջինջ ու հոգեթով...

Եւ մեղմ բռնեցի քո ձեռքը քնքոյշ,
Սեղմեցի սրտիս՝ մեղմ հառաչելով։

CXVIII Յուսամ՝ ասած չեմ՝ զուր ու անտեղի,
Թէ մի տեսիլք է մարդը—անհեթեթ,
Թէ ես մահուան դէմ իզուր կռուեցի՝
Ինչպէս [1]) Պողոսը գազանների հետ,

Մարդը մի ճարտար հողանիւթ շինուածք...
Թող գիտունք խօսան ու պնդեն յաւար –
Այդ գիտութիւնը և այդ զուր խօսուածք
Շահ չունին ոչ ինձ, ոչ մէկի համար։

Թէ մի գիտնական գայ այսուհետև,
Եւ կապկին ընտրէ իբրև օրինակ,
Եւ տայ իր կեանքին կապկային մի ձև,
Փոյթ չէ, ես ունիմ մի այլ նպատակ։

CXIX Ով տխուր [2]) Հեսպէր, պատրաստ ես արդէն
Արեգակի հետ առագաստ մտնել.
Արևի վերջին շողը ոսկեղէն
Սկսում է ահա մարել ու մթնել։

Լծկան եղները ազատ են հիմայ,
Ցամաք են հանում մարդիկ մակոյկներ,
Դուռ ու պատուհան փակուումեն ահա,
Քօղարկում է մեզ գիշերուան ստուեր։

Զովասուն [3]) Բոսփոր, դու սիրուն աստղիկ,
Քեզ հետ միասին զարթնում է աշխարհ.
Երգում է թռչունն, գործում են մարդիկ,
Քեզ է յաջորդում արևը պայծառ։

Բեռնաբարձ նաւը շարժուում է, լողում,
Ծովափից իրան բարև են տալիս.
Մուրճի հարուածը լսւում է գիւղում,
Լծկան եղները դաշտ են դուրս գալիս։

Դու Հեսպէր—Բոսփոր, նոյնը կը մնաս,
Թէկուզ կրուսես երկպատիկ անուն—

[1]) Ակորընթացոց ժե 32,
[2]) Երեկոյան աստղը։
[3]) Առաւօտեան աստղը։

Ինչպէս անցեալը և ինչպէս ներկան՝
Դիրքըդ ես փոխում, բայց ոչ էութիւն։

CXX Դու ինձ մօտ էիր, սիրելի ընկեր,
Երբ կուում էի խոլ խաւարի դէմ,
Եւ ճեղքում էի անթափանց ստուերը,
Որ յաւերժական երկինքը տեսնեմ,

Որ անուրջներից թեւեր ստացած՝
Թռչէի դէպի աստղազարդ շրջան,
Որ հոգիս զգար հեզ ու երկիւղած
Լի երանութիւն, վայելք անվախճան։

Թէ ինձ մօտ էիր, եկ ինձ մօտ կրկին,
Բնակուիր իմ մէջ, ես կարօտ եմ քեզ.
Եկ, որ զօրանան իմ ջիղ ու հոգին,
Թէ գերեզմանը չէ բաժանում մեզ։

Թող մանկութեանս կարմիր արշալոյս
Ծագէ իմ վերայ, ով իմ բարեկամ.
Նոր կեանք ներշնչիր, որ ես լիայոյս
Մահ ու խաւարից փախչիմ, հեռանամ։

Թող ուրախ ապրեմ՝ որպէս երեխայք,
Թող տապ ու ցօղից աղեղ գոյանայ.
Եւ ջինջ երկինքը ցոյց տայ իր հմայք,
Բացուի ինձ համար մի վարդ ապագայ։

CXXI Այնտեղ ծփում են գետ, ծով ու լճակ,
Ուր առաջ կային վայրի ծառ ու ճիւղ.
Եւ այնտեղ, ուր կար ծովի լուռ յատակ,
Հիմայ տեսնում եմ շէն քաղաք ու գիւղ։

Նոյն իսկ լեռները հալւում են կարծես,
Ըստուերների պէս փախուստ են տալիս.
Ցամաք երկիրներ՝ ամպ ու մէգի պէս,
Մերթ խտանում եմ, մերթ ցրիւ գալիս։

Թէկուզ աշխարհը այսքան յեղեղուկ,
Բայց սէրըս անշէջ, յոյսըս հաստատուն—
Թէ լեզուս հանէ մի վերջին շշուկ,
Դա հրաժեշտ չէ, այլ ցը տեսութիւն։

CXXII Նորան է դիմում սեր կարօտ հոգին,
Մերթ երկմտաբար, մերթ լիահաւատ.
Այն աներևոյթ, անհաս էակին
Զգում է իր մէջ ամեն մի անհատ։

Նորան չեմ գտնում արեգակի մէջ,
Եւ ոչ էլ արծուի թեւերի վերայ.
Ո՛չ բանակռիւ, ոչ հարցեր ու վէճ
Ցոյց չեն տալիս ինձ, թէ որ՞տեղ է Նա։

Երբ մերթ հաւատքը մտնում էր խոր քուն,
Մի ձայն ասում էր՝ «Էլ մի հաւատալ.»—
Ալէծուփ եղերքն փըլչում էր իսկոյն
Դէպի անդունդը՝ անտակ ու ժայռ։

Երբ սառած մասը ցրտաշունչ մտքիս
Հալւում էր իմ մէջ բոցից սրբազան,
«Ես զգացել եմ՝ ճչում էր հոգիս
Բարկութեամբ լցուած մի մարդու նման,

(Կամ թէ ոչ—երկչոտ մի մանուկի պէս...—)
Բայց ինձ այդ ճիչը իմաստուն արաւ.
Մի լալկան մանուկ լինէի կարծես,
Թէկուզ լացում է, բայց գիտէ հարկաւ

Թէ հայրը մօտ է։—Ես ինչ՞ եմ կամ ով...
—Այն եմ ինչ որ եմ, գաղտնիք անթափանց...
Եւ մի խուլ տեղից՝ բնութեան միջով,
Բոնեց ինձ մի ձեռք, որ ձուլեց մարդկանց։

CXXIII Ինչ որ երգիս մէջ ասել եմ արդէն,
Ինչքան էլ տխուր հնչէ իմ նուագ,
Թէկուզ իմ երգը շատերը կարծեն
Ե՛ւ հակասական եւ աննկարագնակ—
Ցոյսըս դարձեալ պիտ վառ մնայ յաւէտ,
Մերթ պղտոր էին միայն իմ աչեր,
Սէրը խաղում էր մութ ստուերի հետ,
Բայց նպատակը ճշմարտութիւն էր։

Եթէ պատուէր թախիծ իմ սրտին,
Սէրը երգումէր գոհ ու երջանիկ.
Եթէ իմ խօսքը հնչումէր ուժգին,
Սէրը դնումէր վերան իր կնիք։

Սէրը կը վարէ կեանքիս եվ և էջ,
Մինչ անյայտ տեղը քեզ հետ միանամ,
Մինչ մագնիսական ոյժերըս իմ մէջ
Բաղխող սրտիս հետ խամրին միաժամ։

CXXIV Սէրը թագուհիս և սէրը իմ տէր,
Որին միշտ կուզեմ մնալ հպատակ,
Սիրոյ սուրհանդակն բերումէ լուրեր
Իմ բարեկամից ամեն ժամանակ։

Սէրը իմ իշխան, սէրը թագաւոր,
Միշտ պիտի տևէ, միայն թէ դորան
Այստեղ ծառայեմ, և դա ամեն օր
Կը դնէ շուրջըս մի քաջ պահապան,

Որ հսկումէ ինձ՝ շուրջըս ման գալով.
Լսումեմ ձայնը այդ պահապանի.
Լուռ անհունութեան, խաւարի միջով
Շշնչումէ նա՝ «ամեն ինչ բարի»։

CXXV «Ամեն ինչ բարի՝» երբ խաւարի մէջ
Մաքուր հաւատքը բաժանուի ծէսից,
Թէկուզ մրրիկը մռնչէ անվերջ,
Բայց եւ կաւետէ մի ձայն գաղտնալից,

Թէ ճշմարտութիւնն յաղթանակէ պիտ,
Եւ այստեղ տիրէ հաւասարութիւն,
Թէկուզ Սէյն գետի ափերը անմիտ
Պատնէշներ շինէ ու թափէ արիւն։

Վայ այդ ափերին՝ տկլոր ու աղքատ,
Վայ նոյնպէս նորան, որ կրումէր թագ,
Ահ, սասանումեն հիմնաքար ու պատ,
Եւ գահավիժում բուրգ ու աշտարակ,

Եւ խրում գետը ու հալում իսպառ.
Բոց է բարձրանում երկրից դէպի ամպ.
Բերդերը բարձրից գլորուումեն վար,
Եւ Ժամանակը ներկուումէ արեամբ։

Կարծես դժոխքի երախն է բացուած...
—Բաղդաւոր աստղիկ, թանկագին հոգի,

Ժպիտ երեսիդ՝ նայում ես դու ցած,
Եւ ասում այսպէս՝ «ամեն ինչ բարի»։

CXXVI Սէրը թև առած՝ թռչում է ուժգին,
Միշտ ժանտ ժահուան դէմ կանգնած անվեհեր։
Տալիս է նոր ոյժ մեր թոյլ հաւատքին,
Որ քննենք կեանքի ընթացիկ դէպքեր։

Ծով-ժամանակը պիտի անկասկած
Դեռ երկար յուզուի, ծփայ ահարկու.
Տիրող ցեղերը ընկնեն պիտի ցած,
Բայց, ով բարութիւն, ի՞նչ անհուն ես դու։

Ո՛վ անսանձ ժամեր՝ լոյս ու վախով լի,
Լոկ սա էք արել ձեզ համար կանոն,
Որ ձեր հին խաղը կրկնի որ կրկնի...
—Ա՛յս է ձեր կարգը, այս է ձեր պաշտօն,

Որ ճոխ ստերով խաբէք ամբոխին,
Մարդկանց մէջ սերմէք վէճեր ու կռիւ,
Խօսքի իմաստը փոխէք հիմնովին,
Եւ առաջ բերէք աղանդներ անթիւ,

Որ բռնակալին նոր դասեր տաք դուք,
Ոնջ գիտնականի ոյժը ջլատէք,
Ամայի դաշտը դարձնէք գեղաշուք,
Եւ հին դղեակը ժամուռով պատէք։

Բայց թէկուզ հեգնեմ ձեզ ու ձեր վաստակ,
Տեսնում է հոգիս՝ պարզ ու անխռով,
Թէ այդ բոլորը ունի նպատակ՝
Ինչպէս մի արուեստ տարբեր գծերով։

CXXVII Բաղձալի ընկեր, դու իմ սիրելիս,
Հեռու ես, բայց մօտ՝ խինդ ու վշտի մէջ.
Երկինքն իմ սիրտը վերև քաշելիս՝
Սիրում եմ քեզ շատ, սիրումեմ անվերջ։

Ծանօթ թէ օտար, մա՞րդ թէ լուսածին...
—Զը գիտեմ։—քե՛զ եմ նշմարում միայն.
Ով անմահ, դու չես ենթակայ ժահին,
Դու իմն ես, իմը, իմը յաւիտեան։

Հազուագիւտ ընկեր, հին, նոր, մնայուն,
Թէկուզ սերտ—սիրուած, բայց անքննելի.
Մի երազ տեսայ, մի երազ սիրուն,
—Թէ աշխարհ քեզ հետ միանայ պիտի։

CXXVIII Քամին փչելիս՝ լսումեմ քո ձայն։
Նոյնպէս ջրերը մարմանդ հոսելիս,
Թէ լուսածագին, թէ երեկոյեան
Քեզ եմ նշմարում, ով իմ սիրելիս։

Արդեօք ինչ՞ ես դու, ինչպէ՞ս հասկանամ.
—Թէկուզ տարբալոյծ՝ դու խառնուած լինես
Վարդ ու աստղի հետ, ով իմ բարեկամ,
Դարձեալ ոչ պակաս կը սիրեմ ես քեզ։

Եւ հին սիրոյս հետ պիտի միանայ
Իմ այժմեան սէրը ու ահէ յաւէտ,
Ես սիրումեմ քեզ, թէկուզ դու հիմայ
Խառնուած ես Աստծոյ ու բնութեան հետ։

Թէպէտ հեռու ես, բայց միշտ ինձ մօտիկ,
Սիրտս բերկրումէ, երբ իմ մէջ ես դու,
Հնչումէ շուրջս քո անուշ ձայնիկ
Թէկուզ իսկ մեռնեմ, քեզ չեմ կորցնելու։

CXXIX Դու կամք կենդանի, պիտ յարատեւես,
Թէկուզ սասանին երկինք ու երկիր,
Կանգնիր մեր մէջը անշարժ վէմի պէս,
Այժ տուր գործելու, մղիր ու մաքրիր,

Որ ամեն մի անձ վերինը դիտէ,
Եւ կանչէ Նորան, որ լսում է մեզ,
Եւ տալիս հաւատք Նորան, որ գիտէ
Իշխել իր վերայ և մնալ միշտ հեզ,

Որ դրաւ մեր մէջ ճշմարտութիւններ,
Որոնք հաստատել չենք կարող այստեղ,
Մինչև այս երկրից սլանանք ի վեր,
Եւ հոգիս հոգուն միանայ այնտեղ։

ՎԵՐՋ

LENIN adına Dövlət Kitabxanası
№ 10017
ЛЕНИНА
Azərbaycan SSR Dövlət Kitabxanası
ՀՍՍՀ-ՍՍՀ Մ. Մ. Ս. Մասնագիտական գրադարան